

« ՔՐԻՍՏԱԼ ԼԵՅՔ ՀՈԼԴԻՆԳՍ » ՍՊԸ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՉԿԱԼՈՎԿԱ ԵՎ ՆՈՐԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ

Մարզ Գեղարքունիք, համայնք Սևան գյուղ Նորաշեն Սևան Գավառ ճանապարհ 11 կմ 1 հողամաս, Մարզ Գեղարքունիք, համայնք Սևան գյուղ Չկալովկա 9-րդ փողոց 9/1, Մարզ Գեղարքունիք, համայնք Սևան գյուղ Չկալովկա 9-րդ փողոց 9, Մարզ Գեղարքունիք, համայնք Սևան գյուղ Չկալովկա 12-րդ փողոց, Սևան-Գավառ խճուղի, 9-րդ կմ թիվ 67/2, Մարզ Գեղարքունիք, համայնք Սևան գյուղ Չկալովկա Սևան-Գավառ խճուղի 67/3, Մարզ Գեղարքունիք, համայնք Սևան գյուղ Չկալովկա 12-րդ փողոց, Սևան-Գավառ խճուղի 6-րդ նրբանցք 9 հողամաս, Մարզ Գեղարքունիք, համայնք Սևան գյուղ Նորաշեն Սևան-Գավառ ճանապարհ Նորաշենի և Չկալովկայի սահմանին լճի ափ 11 կմ, Մարզ Գեղարքունիք, համայնք Սևան գյուղ Չկալովկա 12-րդ փողոց 6-րդ նրբանցք 7, Մարզ Գեղարքունիք, համայնք Սևան գյուղ Չկալովկա 9-րդ փողոց 5, 5/1, 7, 3/1, 3 հողամաս, Մարզ Գեղարքունիք, համայնք Սևան գյուղ Չկալովկա 9-րդ փողոց 28, 30, 24, 22/1, 26 հողամաս

ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ

ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԵՎ ԲԱԶՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԿ
ԿՈՆՖԵՐԱՆՍ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(ԼՐԱՄՇԱԿՎԱԾ)

ՏՆՕՐԵՆ՝



Կ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԵՐԵՎԱՆ - 2025

Բովանդակություն

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ _____	4
1.1 Տեղեկություններ նախաձեռնողի մասին _____	4
1.2 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը _____	5
1.3 Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը _____	6
1.4 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ) _____	14
1.4.1 Նախատեսվող գործունեության նկարագիրը _____	14
1.4.2 «ՔՐԻՍՏԱԼ ԼԵՅՔ ՀՈՒՂԻԳՍ» ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑՎԵԼԻՔ ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ (161 ՀԱՄԱՐՈՎ / ՄՈՏ 348 ՏԵՂՈՎ) ԵՎ ԲԱԶՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ԿՈՆՖԵՐԱՆՍ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ՀԱՇՎԱՐԿ _____	24
1.4.3 Հողային աշխարհաքններ, շինություններ _____	36
1.4.5 Աղմուկ և թրթռում _____	46
1.4.6 Ջրամատակարարման և կոյուղու արտաքին ցանցեր _____	51
2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ _____	51
2.1 Ֆիզիկաաշխարհագրական պայմանները _____	51
2.2 Երկրաբանական կառուցվածքը _____	52
2.3 Գեոմորֆոլոգիական բնութագիրը _____	53
2.4 Սեյսմիկա և երկրաբանություն _____	54
2.4.1 Մթնոլորտային օդի աղտոտվածությունը _____	56
2.5 Հողային ռեսուրսներ _____	60
2.6 Ջրային ռեսուրսներ _____	63
2.7 Համայնքի կլիմայական պայմանները _____	71
2.8 Բուսական և կենդանական աշխարհ _____	76
2.9 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի սոցիալ-տնտեսական վիճակը _____	85
2.10 Պատմամշակութային և բնության հուշարձանները _____	87
2.11 Հատուկ պահպանվող տարածքներ _____	96
3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ _____	96
3.1 Ռիսկերի գնահատում _____	96
3.2 Արտանետումների աղբյուրները _____	97
3.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն _____	97
3.3.1 Մթնոլորտային օդ _____	97
3.3.2 Ջրային ռեսուրսներ _____	97
3.3.3 Հողային ռեսուրսներ _____	98
3.3.4 Թափոնների կառավարում _____	99
3.3.5 Արտակարգ իրավիճակների պայրաստվածությունը _____	100

3.3.6 Հակահրդեհային միջոցառումներ	101
3.3.7 Աղմուկ և թրթռում	101
3.3.8 Կենսաբազմազանություն և էկոհամակարգեր	102
3.3.9 Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն, մարդու առողջություն	103
4. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ	105
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	106
ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ	115
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	122
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	123

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Տեղեկություններ նախաձեռնողի մասին

Նախաձեռնող		«Քրիստալ Լեյք Հոլդինգս» ՍՊԸ
Նախաձեռնողի հասցե		ք. Երևան, Հյուսիսային պողոտա 8/20
Նախաձեռնողի կոնտակտային տվյալներ		հեռ.՝ 091428123, 093700121
Նախագծի պատվիրատու		«Քրիստալ Լեյք Հոլդինգս» ՍՊԸ
Նախատեսվող գործունեություն		ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Չկալովկա և Նորաշեն բնակավայրերի ափամերձ հատվածում հյուրանոցային համալիրի և բազմաֆունկցիոնալ կոնֆերանս կենտրոնի կառուցում («Բ» կատեգորիա)
Նպատակը		Հյուրանոցային համալիրի և բազմաֆունկցիոնալ կոնֆերանս կենտրոնի կառուցում
Նախատեսվող գործունեության վարչական տարածքը		ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Չկալովկա և Նորաշեն բնակավայրեր
Կառուցապատվող հողամասի մակերեսը		31.80715 հա

1.2 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, բնության, շրջակա միջավայրի և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ գնահատումը: Գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը պետք է ներառի շրջակա միջավայրի բաղադրիչների /հող, ջուր, օդ, կենսաբազմազանություն/ վրա ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Հյուրանոցային համալիրի և բազմաֆունկցիոնալ կոնֆերանս կենտրոնի կառուցումը նախատեսվում է իրականացնել ՀՀ Գեղարքունիքի մարզի, Սևան համայնքի՝ գյուղ Նորաշեն՝ Սևան Գավառ ճանապարհի 11 կմ 1 հողամաս (ծածկագիրը՝ 05-070-2011-0035), գյուղ Չկալովկա 9-րդ փողոց 9/1 (ծածկագիրը՝ 05-075-0147-0011), գյուղ Չկալովկա 9-րդ փողոց 9 (ծածկագիրը՝ 05-075-0147-0013), գյուղ Չկալովկա 12-րդ փողոց, Սևան-Գավառ խճուղի, 9-րդ կմ թիվ 67/2 (ծածկագիրը՝ 05-075-0147-0017), Մարզ Գեղարքունիք, համայնք Սևան գյուղ Չկալովկա Սևան-Գավառ խճուղի 67/3 (ծածկագիրը՝ 05-075-0147-0032), գյուղ Չկալովկա 12-րդ փողոց, Սևան-Գավառ խճուղի 6-րդ նրբանցք 9 հողամաս (ծածկագիրը՝ 05-075-0147-0012), գյուղ Նորաշեն Սևան-Գավառ ճանապարհ Նորաշենի և Չկալովկայի սահմանին լճի ափ 11 կմ (ծածկագիրը՝ 05-070-2011-0012), գյուղ Չկալովկա 12-րդ փողոց 6-րդ նրբանցք 7 (ծածկագիրը՝ 05-075-0147-0025), գյուղ Չկալովկա 9-րդ փողոց 5, 5/1, 7, 3/1, 3 հողամաս (ծածկագիրը՝ 05-075-0147-0034), գյուղ Չկալովկա 9-րդ փողոց 28, 30, 24, 22/1, 26 հողամաս (ծածկագրերը՝ 05-075-0142-0130, 05-075-0142-0131), հատուկ պահպանվող տարածքների, հանգստի համար նախատեսված և բնակավայրերի, հասարակական կառուցապատման գոտիներում:

Ընկերության կողմից սույն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության մշակման համար հիմք է հանդիսացել ՀՀ Գեղարքունիքի մարզի, Սևան համայնքի կողմից 03.04.2023թ տրված N 25 նախագծման թույլտվությունը, ինչպես նաև վերոնշյալ նախատեսվող գործունեության ճարտարապետաշինարարական նախագիծը:

"Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի պահանջներով կազմվել է նախատեսվող գործունեության սույն հաշվետվությունը, որում ամփոփվել են գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների գնահատման և վերլուծության արդյունքները:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի ու մարդու առողջության վրա հնարավոր վնասակար ազդեցությունների կանխատեսումը, կանխարգելումը, նվազեցումը կամ բացառումը:

Գործունեության իրականացման ընթացքում հիմնական բնապահպանական և սոցիալական ռիսկերն են՝

- Օդային ավազանի աղտոտում՝ շինարարական աշխատանքների և շինարարական տեխնիկայի շարժիչների շահագործման ընթացքում,

- Շինարարության փուլում մերձակա բնակչությանը /հարևանությամբ առկա բնակելի և հասարակական օբյեկտներ/ պատճառվող անհանգստություն՝ մեքենաների և տեխնիկայի տեղաշարժից,

Հաշվետվությունում բնապահպանական ելակետային տվյալների հիման վրա առաջարկվել և ամփոփվել են վերը նշված ազդեցությունների և շրջակա միջավայրի մյուս բաղադրիչների վրա կանխարգելմանը և նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր:

Գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փուլում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

➤ Աշխատանքային նախագծի հիման վրա նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և հաշվետվության մշակում,

➤ Բնապահպանական փորձաքննության նպատակով նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային լսումների անցկացում և հանրային լսումների արդյունքների (ներառյալ՝ արձանագրություններ, մասնակիցների ցանկ տեսաձայնագրություն) ներկայացում շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ:

Հյուրանոցային համալիրի և բազմաֆունկցիոնալ կոնֆերանս կենտրոնի կառուցման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը պատրաստվել է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն, որոնք բերված են ստորև:

1.3 Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

ՀՀ Գեղարքունիքի մարզի, Սևան համայնքի Չկալովկա և Նորաշեն բնակավայրերի ափամերձ հատվածում՝ 31.80715 հա հողամասում «Քրիստալ Լեյք Հոլդինգս» ՍՊԸ կողմից հյուրանոցային համալիրի և բազմաֆունկցիոնալ կոնֆերանս կենտրոնի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը կազմվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են բնապահպանական ոլորտին առնչվող օրենսգրքերում և իրավական ակտերում: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերը ներկայացված են ստորև.

«Տահմանադրություն (ընդունված 06.12.2015թ.) – 12-րդ հոդվածը
«Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը» սահմանում է
պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության,

բարելավման, վերականգնման, բնական պաշարների բանական օգտագործման
վերաբերյալ՝ հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև:
Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության
մասին:

**«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության
մասին»** ՀՀ օրենք օրենք (2023, ՀՕ-150-Ն) - Օրենքով սահմանվում են ընդհանուր
իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված
են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման “հայեցակարգերի” պարտադիր
անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման
համար: Համաձայն՝ “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և
փորձաքննության մասին” ՀՀ օրենքի, 14-րդ հոդվածով սահմանված են շրջակա
միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա
հիմնադրությամբ փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները:
Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր
ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում,
շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական
վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում,
փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է
բնապահպանական փորձաքննության: Շրջակա միջավայրի վրա ազդեցության
ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն՝ ըստ բնագավառների
դասակարգվում են երկու կատեգորիայի՝ «Ա», «Բ» ըստ շրջակա միջավայրի վրա
նվազող ազդեցության աստիճանի: Օրենքը հստակեցնում է ծանուցման,
փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման
ընթացակարգերը:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք ՀՕ-522-Ն
(ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2022թ.) - կարգավորում է մթնոլորտային օդի
պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային
օդի որակի պահպանությանը, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա
միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման
նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական
հարաբերությունները:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001) - սահմանում է պետական, այդ թվում՝
տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական,
արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները:
Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները,
ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական
ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

«Հողօգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենքը (2008թ) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

«Թափոնների մասին» ՀՀ օրենք (24.11.2004) - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները:

ՀՀ Կառավարության 121-Ն որոշումը, որը վերաբերում է ՀՀ-ում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003), պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների մասին: ՀՀ Կառավարության նշված որոշման մեջ, վերնագրում, փոփոխություն է տեղի ունեցել 13.12.2007թ , 1451-Ն որոշմամբ սահմանված կարգով, ինչպես նաև 18.03.2011թ 238-Ն ՀՀ Կառավարության որոշմամբ կրկին վերնագրում փոփոխություն է տեղի ունեցել և վերաշարադրվել է «վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման» բառերով:

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005)- կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

«Բնության հարուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը (27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N 967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը ըստ տեսակների և տեղադիրքի:

ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N 191-Ն որոշում:

ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի հուլիսի 31-ի «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N 781-Ն որոշում:

ՀՀ կառավարության 02.11.2017թ. N 1404-Ն «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը եվ հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու եվ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի n 1026-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշում:

ՀՀ կառավարության 08.09.2011թ. N 1396-Ն «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, հայաստանի հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի n 1622-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու եվ 2001 թվականի ապրիլի 12-ի n 286-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշում:

2002թ. հունիսի 12-ի ՀՕ-376-Ն օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթ, Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015թ. նոյեմբերի 30-ի N 1243-Ն հրամանի հավելվածի 2-րդ կետի 16-րդ ենթակետ, Կառավարության 2015թ. մարտի 3-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածի կարգի 141-րդ և 173-րդ կետերի, N 4 հավելվածի N 3 ցանկի 4-րդ կետի 1-ին ենթակետի «իզ» պարբերություն, Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի N 102-Ն հրամանով հաստատված գործող նորմերով սահմանված երկրաշարժադիմացկունության հիմնական սկզբունքների, 2014թ. հունիսի 21-ի ՀՕ-110-Ն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի, 7-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի, 16-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի, 17-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի դրույթներ

ՀՀ Կառավարություն 8 փետրվարի 2018 թվականի N108-ն ո ը ո 2 ու մ «Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին եվ տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու եվ հայաստանի հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի n 1318- ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

ՀՀ կառավարության 27.05.2015թ.-ի N 764-Ն որոշում, որով հաստատվել է շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը: Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար

«Սևանա լճի մասին» ՀՀ օրենքը-(15. 05. 2001թ.)- կարգավորում է Սևանա լճի, նրա ջրհավաք ավազանի և տնտեսական գործունեության գոտու էկոհամակարգերի պահպանման, վերականգնման, վերարտադրման, բնականոն

զարգացման և օգտագործման հետ կապված հարաբերությունները: Սահմանում է Սևանա լճի, որպես Հայաստանի Հանրապետության քաղցրահամ ջրերի ռազմավարական շտեմարանի՝ բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, կլիմայական, ռեկրեացիոն (վերականգնողական) և հոգևոր արժեք ունեցող ռազմավարական նշանակության էկոհամակարգի բնականոն զարգացման, վերականգնման, բնական պաշարների վերարտադրման, պահպանման և դրանց օգտագործման պետական քաղաքականության իրավական ու տնտեսական հիմունքները:

«ՀՀ ջրային օրենսգիրք» (2002) - նպատակը երկրի ջրային ռեսուրսների պահպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության կարիքների բավարարման և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների պահպանման համար իրավական հիմքերի ապահովումն է: Սահմանում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակության պարտավորությունները, ջրի ազգային քաղաքականության և ջրի ազգային ծրագրի մշակման կարգը, պետական ջրային կադաստրի և մոնիթորինգի, ջրային ռեսուրսների օգտագործման թույլտվություն տրամադրող համակարգերի ստեղծումը, անդրսահմանային ջրային ռեսուրսների օգտագործումը, ջրի որակի չափանիշները, հիդրոլոգիական կառուցվածքների շահագործման անվտանգության խնդիրները, ջրային ռեսուրսների պահպանությունը և պետական վերահսկողությունը: Ապահովում է հանրության համար համապատասխան տեղեկատվության մատչելիությունը:

«Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենք (2006) և «Հայաստանի հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» հայաստանի հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին(21.12.2015թ.) ՀՀ օրենք-կարգավորում է Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի սահմանման և իրականացման հետ կապված հարաբերությունները, ընդգրկելով ազգային ջրային 7 պաշարի, ռազմավարական ջրային պաշարի, օգտագործելի ջրային ռեսուրսների գնահատականները, ջրերի նկատմամբ առաջարկը և պահանջարկը, ջրային բնագավառի պահպանման և զարգացման հիմնական խնդիրները և հեռանկարները, ելնելով ջրի սահմանափակ լինելու, մարդու կյանքի և առողջության, կենդանական և բուսական աշխարհի պահպանման համար հիմնական միջոցներից մեկը հանդիսանալու, դրա մատչելիության ապահովման նախապայմաններից:

«Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենք (2005) - նպատակը մարդու բարեկեցության, հանրապետության սոցիալ-տնտեսական համակարգի զարգացման, տնտեսական և էկոլոգիական կարիքները բավարարելու համար անհրաժեշտ քանակի, ռեժիմի և որակի ջրային ռեսուրսների մատչելիության ապահովումն է: Սահմանում է ջրային ռեսուրսների կայուն կառավարման, օգտագործման և պահպանության գերակայությունները, ջրային ռեսուրսի հաշվառումը և գնահատումը, առաջարկի և պահանջարկի ձևավորումը, ջրավազանային կառավարման հետ կապված հարաբերությունները:

«Կառավարության որոշումներ»

- «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» թիվ 71-Ն և «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» թիվ 72-Ն ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի որոշումները - սահմանում են ՀՀ բուսական և կենդանական աշխարհների հազվագյուտ, անհետացած ու անհետացող, կրճատվող, անորոշ տեսակների կենսաբանությունը, թվաքանակը, տարածման վայրերը և ձևաբանությունը:
- «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 31.07.2014թ. N 781-Ն որոշումը-սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:
- «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» 2007թ. մարտի 15-ի N385-Ն որոշում - Ներառում է Գեղարքունիքի մարզի պատմամշակութային հուշարձանների ցանկը:
- «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» թիվ 967-Ն ՀՀ կառավարության որոշում – Սահմանում է ՀՀ բնության հուշարձանների ցանկը՝ համաձայն որոշման հավելվածի:
- «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության եվ օգտագործման բնագավառում պետական ծրագիրը եվ միջոցառումները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 25.09.2014թ. N1059-Ա որոշում – Հաստատում է ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը՝ համաձայն N1 հավելվածի, Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության և օգտագործման բնագավառի 2014-2020 թվականների պետական ծրագրի միջոցառումները՝ համաձայն N 2 հավելվածի:
- «Հայաստանի Հանրապետության կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության եվ օգտագործման բնագավառներում ռազմավարությանը եվ գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» կառավարության 10.12.2015թ. նիստի N54 և «Հայաստանի Հանրապետությունում անապատացման դեմ պայքարի ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» կառավարության 27.05.2015 նիստի N23 արձանագրային որոշումները, ներառյալ ՀՀ կողմից վավերացրած բնապահպանական միջազգային պայմանագրերի պահանջները:

- ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 3-ի N 177-Ն որոշմամբ հաստատված Սևանա լճի կենտրոնական գոտում կառուցապատման համար նախատեսված տարածքների գոտիավորման նախագիծ:
- ՀՀ կառավարության 2008թ. դեկտեմբերի 18-ի թիվ 1563-Ն որոշում «Սևան» ազգային պարկի և դրան հարող տարածքներում հողամասերի վարձակալության, կառուցապատման իրավունքի տրամադրման և քաղաքաշինական գործունեության իրականացման մասին:
- ՀՀ կառավարության 2002թ. թիվ 57 որոշում Սևանա լճի էկոհամակարգի վրա բացասական ազդեցություն ունեցող նյութերի, կենսածին տարրերի, ծանր մետաղների կամ դրանց միացությունների և այլ նյութերի ցանկը հաստատելու մասին:
- «Սևան» ազգային պարկի կանոնադրություն», ՀՀ կառավարության 2002 թվականի մայիսի 30-ի N927-Ն որոշում:
- «Սևան» ազգային պարկի 2007-2011 թվականների կառավարման պլանի (հողերի օգտագործման սխեմայի) հաստատման մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունվարի 18-ի N205-Ն որոշում:
- Մայիսի 2004 թվականի N 766-Ն «Սևան» ազգային պարկի 1908.0 մետր բացարձակ նիշից ցածր տարածքներում հողամասերի վարձակալության և կառուցապատման իրավունքի տրամադրման առանձնահատկությունների և հայաստանի հանրապետության կառավարության 2002 թվականի մայիսի 12-ի N 927-ն որոշման մեջ լրացում կատարելու մասին:
- ՀՀ կառավարության 19.11.2014թ. N1325-Ն որոշում՝ «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» : Շրջակա միջավայրի նախարարի 2003թ. դեկտեմբերի 10-ի «Ջրային ռեսուրսներ թափվող կեղտաջրերի թույլատրելի սահմանային արտահոսքի չափաքանակների հաշվարկի մեթոդիկան հաստատելու համար» N 464-ն հրաման:
- Շրջակա միջավայրի նախարարի 2020թ. սեպտեմբերի 9-ի «Ռեկրեացիոն գոտիներում ջրային ռեսուրսների պահպանության պահանջները սահմանելու մասին» N 335-Ն հրաման:
- 22 ապրիլի 1999 թվականի N 259 Մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների պետական հաշվառման կանոնադրությունը հաստատելու մասին:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք (2000) - կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման ընթացակարգերը:

«Հարկային օրենսգիրք» ՀՀ օրենքը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998) - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող

գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14,15,16, Գլուխ 6):

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

1.4 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.4.1 Նախատեսվող գործունեության նկարագիրը

Սույն հաշվետվությամբ ներկայացված նախատեսվող գործունեության կատարող է հանդիսանում «Քրիստալ Լեյք Հոլդինգս» ՍՊԸ, որը հատուկ պահպանվող տարածքների, հանգստի համար նախատեսված և բնակավայրերի, հասարակական կառուցապատման գոտիներում մտադիր է իրականացնել հյուրանոցային համալիրի և բազմաֆունկցիոնալ կոնֆերանս կենտրոնի կառուցման աշխատանքներ: Կառուցապատման համար հիմք է հանդիսանում «Քրիստալ Լեյք Հոլդինգս» ՍՊ ընկերությանը կառուցապատման իրավունքով տրամադրված, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման No 24082022-05-0007, 23082022-05-0066, 24082022-05-0009, 24082022-05-0008, 08072019-05-2023, 18092018-05-0040, 18092018-05-0038, 13092022-05-0036 վկայականները և ընկերությանը սեփականության իրավունքով տրամադրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման No 23082022-05-0069, 24082022-05-0004 վկայականները, համայնքի գլխավոր հատակագիծը, Սևանա լճի կենտրոնական գոտում կառուցապատման համար նախատեսված տարածքների գոտիավորման նախագիծը, Սևան համայնքի կողմից 03.04.2023թ տրված N 25 նախագծման թույլտվությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի համաձայնությունը: Նախատեսվող գործունեության կառուցապատման մակերեսը կազմում է ավելի քան 1500քմ և տվյալ գործունեությունը նախատեսվում է իրականացնել 31.80715հա մակերեսի վրա, որից սեփականության իրավունքով՝ 28,1653 հա, կառուցապատման իրավունքով՝ 3.64185 հա, հետևաբար նախատեսվող գործունեությունը ըստ “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” ՀՀ օրենքի, 12-րդ հոդվածի 4-րդ կետի համարվում է Բ կատեգորիայի քաղաքաշինական գործունեություն:

«ՔՐԻՍՏԱԼ ԼԵՅՔ ՀՈԼԴԻՆԳՍ» ՍՊԸ-ի կողմից իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում կառուցվելիք հյուրանոցային համալիրի և բազմաֆունկցիոնալ կոնֆերանս կենտրոնի նախագիծը մշակված է Սևանի քաղաքապետարանի կողմից 03/03/2023թ. «ՔՐԻՍՏԱԼ ԼԵՅՔ ՀՈԼԴԻՆԳՍ» ՍՊԸ-ին տրված N 25 ՃՀԱ-Ի, պատվիրատուի կողմից տրված տեխնիկական առաջադրանքի, տեղագրական-գեոդեզիական հանույթի, տարածքի ինժեներական հնարավորությունների ուսումնասիրությունների, ինժեներաերկրաբանական հետազոտությունների հիման վրա:

Կառուցապատվող տարածքը գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Չկալովկա և Նորաշեն բնակավայրերի ավիամերձ հատվածում, ներառում է «ՔՐԻՍՏԱԼ ԼԵՅՔ ՀՈԼԴԻՆԳՍ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող և «ՍԵՎԱՆ» ազգային պարկի կողմից կառուցապատման իրավունքով տրամադրված հողեր:

Ներդրումային ծրագրի ընդգրկված հողամասերի ընդհանուր մակերեսը կազմում է 31.80715 հա, որից սեփականության իրավունքով՝ 28.1653 հա, կառուցապատման իրավունքով՝ 3.64185 հա: Սեփականության իրավունքով

պատկանող 20.8341 հա մակերեսով հողատարածքը գտնվում է Սևան-Մարտունի-Գետափ ավտոճանապարհի աջ կողմում, իսկ սեփականության իրավունքով պատկանող 7,3312 հա մակերեսով և նրան հարակից կառուցապատման իրավունքով տրամադրված 3,64185 հա մակերեսով հողատարածքները գտնվում են Սևանա լճի ափամերձ հատվածում, որտեղ էլ նախատեսվում է իրականացնել հյուրանոցային համալիրի և կոնֆերանս կենտրոնի շինարարությունը:

Նախատեսվող կառուցապատման հիմքում դրված է լանդշաֆտի առավելագույն պահպանման և ներդաշնակ միջավայրի ձևավորման սկզբունքը, ինչի արդյունքում ստեղծվում են զբոսաշրջության զարգացման և միաժամանակ բնության պահպանության համար անհրաժեշտ նախապայմանները: Տարածքում ընտրված տարբեր դիտակետերից լայն տեսարաններ են բացվում դեպի Սևանա լիճը եվ թերակղզին:

Ներդրումային ծրագրով նախատեսվող շինարարական օբյեկտների մեջ հիմնական դոմինանտը 161 տարբեր դասերի համարներով հյուրանոցային համալիրն է, որի կառուցապատման մակերեսը կազմում է **7321.52 քմ**, ընդհանուր մակերեսը՝ **25878.63 քմ**: Այն իրենից ներկայացնում է **127.8x57.05x20.65(հ)մ** հարաչափերով շինություն, որը Սևան-Մարտունի-Գետափ ավտոճանապարհի կողմից 4 հարկանի է՝ ներառյալ ձեղնահարկը, իսկ դեպի լիճ, հաշվի առնելով ռելիեֆի առանձնահատկությունները՝ նվազում է աստիճանաձև՝ դառնալով մեկ հարկ: Շենքն ունի ներքին ատրիում բակ, որի վերևի և դեպի լիճ նայող հատվածները փակված են ապակե վիտրաժներով: Շենքում նախատեսված են հանգստի և ժամանցի սպասարկման համար տարածքներ, այդ թվում՝ առևտրի տաղավարներ, 400 նստատեղով ռեստորան, ֆուդ-կորտ, ֆիտնես սրահ, բոուլինգի սրահ, դեպի լիճ դուրս եկող տեռասային բացօթյա բար-սրճարաններ, փակ լողավազան, շոգեբաղնիքներ, մերսման սրահ, մարզասենյակներ՝ հանդերձարաններով, սանհանգույցներով և ցնցուղարաններով: Փակ լողավազանին կից նախատեսված է նաև բար-սրճարանով երկհարկ սպասարահ, իսկ լողավազանի ներքևում տեղադրված են վերջինիս սպասարկման համար անհրաժեշտ տեխնիկական սենյակները: Նույն հարկում տեղադրված են նաև քողարկված տնտեսական մուտքերը, որտեղից էլ կատարվում է շենքի հիմնական տնտեսական սպասարկումը: Կիսանկուղային և ստորգետնյա հարկերը անհրաժեշտության դեպքում կարող են օգտագործվել որպես թաքստոցներ: Նախատեսված են նաև սպասարկող անձնակազմի համար սանհանգույցներ և օժանդակ սենյակներ: Հյուրանոցային համալիրը տեղադրված է 1905.0 բացարձակ նիշից բարձր (**հյուրանոցային համալիրի ամենացածր նիշն է՝ 1907.40-ը**)՝ մայրուղային ավտոճանապարհից էլ գրեթե 27.0 մ հեռավորության վրա, որը բաժանվում է կանաչ գոտիով:

Կոնֆերանս կենտրոնի շենքը զբաղեցնում է **2346.4 քմ** մակերեսով տարածք: Այն իրենից ներկայացնում է **6900 քմ** ընդհանուր մակերեսով, երկհարկանի (լճի կողմից եռահարկ), **35.9x77.0x13.7(հ)մ** հարաչափերով կառույց: Շենքում նախատեսված են՝ միջոցառումների և խորհրդակցությունների սրահներ, ցուցասրահներ, գիշերային ակումբ (**ձայնամեկուսացումով, և չթափանցող վարագույրներով**), երաժշտական սրահ, ռեստորաններ, բացօթյա սրճարաններ, ժամանցի համար նախատեսված այլ տարածքներ և ստորգետնյա պահեստ, որը անհրաժեշտության դեպքում նույնպես

կարող է օգտագործվել որպես թաքստոց: Շենքը նույնպես տեղադրված է 1905.0 բացարձակ նիշից բարձր (կոնֆերանս կենտրոնի ամենացածր նիշն է՝ 1907.64-ը):

Դեպի հանգստի գոտի մուտքը և ելքը նախատեսված է իրականացնել երկրորդական ճանապարհից: Ներքին ճանապարհային մոտեցումները իրականացվել են՝ հաշվի առնելով տեղանքի ռելիեֆի և լանդշաֆտի առանձնահատկությունները՝ միաժամանակ ապահովելով հյուրանոցի, բազմաֆունկցիոնալ կոնֆերանս կենտրոնի ու հետագա փուլերում կառուցվելիք քոթեջային թաղամասերի սպասարկման համար օպտիմալ հասանելիությունը:

1905.0 բացարձակ նիշից ներքև ընկած բոլոր տարածքները նախատեսված են որպես լողափային գոտիներ, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 10000 քմ:

Կանաչ գոտիների ընդհանուր մակերեսը կազմում է մոտ **24390 քմ**, ինչը կազմում է ընդհանուր մակերեսի մոտ **76,68 %-ը**: Կանաչ գոտիների մեծ մասը նախատեսվում է թողնել իրենց բնական անփոփոխ լանդշաֆտի տեսքով, որոշ հատվածներ բարեկարգվելու են: Ոռոգման սեզոնին ըստ անհրաժեշտության կօգտագործվի մաքրման կայանից դուրս եկող ջուրը՝ **1905մ նիշից բարձր գտնվող կանաչ տարածքների ոռոգման նպատակով**:

Սևան-Մարտունի-Գետափ ավտոճանապարհի աջ կողմում ընկած սեփական հողատարածում կառուցվելու է խմելու ջրի մատակարարման և հակահրդեհային անվտանգության համակարգի գործունեության համար նախատեսված թվով 2 ջրամբարներ, իսկ ձախ կողմում տեղադրելու է նորմատիվ պահանջներին համապատասխան հզորությամբ կոյուղաջրերի մաքրման ժամանակակից կայան:

Հյուրանոցային համալիրի եվ բազմաֆունկցիոնալ կոնֆերանս կենտրոնի էլեկտրասնուցման ենթակայանի, ջեռուցման և սառեցման համակարգերի, ջրամատակարարման պոմպակայանների համար նախատեսված շինությունները տեղադրվելու են Սևան-Մարտունի-Գետափ ավտոճանապարհի ձախ կողմում, սույն գլխավոր հատակագծով ենթակառուցվածքների համար առանձնացված մեկ ընդհանուր տարածքում:

Ողջ կառուցապատումը նախատեսված է թույլատրելի 1905.0 հորիզոնական նիշից բարձր տեղադիրքերի վրա:

ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿ

No	ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՉԱՓ. ՄԻԱՎ., ՀԱ	ՉԱՓ. ՄԻԱՎ., %
1	ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ	0.73	2.3
2	ԿՈՆՖԵՐԱՆՍ ԿԵՆՏՐՈՆ	0.23	0.72
3	ԿԱԹՄԱՅԱՏՈՒՆ ԵՎ ՊՈՄՊԱԿԱՅԱՆ	0,02	0,06
4	ԵՆԹԱԿԱՅԱՆ	0,01	0,03
5	ՔՈԹԵԶԱՅԻՆ ԹԱՂԱՄԱՍԵՐ (ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ)	2.56	8.05
6	ԼՈՂԱՓ	1.0	3.14
7	ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ ԵՎ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՆԵՐ	2.87	9.02
8	ԿԱՆԱԶ ԳՈՏԻ	24.39	76.68
ԸՆԴԱՄԵՆԸ՝		31.80715	100

ԿՈՅՈՒՂՈՒ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆ՝ ՕՐԵԿԱՆ 3 x 90 ԽՄ ՀՁՈՐՈՒԹՅԱՆ

Մաքրման կայանը ծառայելու է հյուրանոցային համալիրին (ներառյալ նրա կազմում ընդգրկված ֆուդ քորտին) և կոնֆերանս կենտրոնին: Կայանի նախատեսված 270 խմ հզորությունը վերը նշված կառույցների այցելուների սպասարկման համար պահանջվող ջրաքանակի հաշվարկից ավել է նախատեսվել, որպեսզի ապահովվի կայանի առանց սահմանային ծանրաբեռնվածությամբ աշխատանքը: Սույն հաշվետվությունում ներառված սպառողների ջրի ծախսի հաշվարկի համաձայն (կատարվել է ըստ ՀՀՇՆ 40-01.01-2014-ի հավելված 3-ի) այցելուների թվի հանրագումարը կազմում է 1150 մարդ:

270 խմ տարողության կոյուղու մաքրման կայանը բաժանված է 3 հավասար մասի՝ մոդուլի: Յուրաքանչյուր մասը՝ մոդուլը օրեկան 90 խմ կեղտաջրի մաքրման հնարավորություն է տալիս: Երբ 3 մոդուլներից 1 մոդուլը ըստ պահանջի չի օգտագործվում, ապա մյուս մոդուլները մինչև վթարված մասի նորոգումը կարող են օրեկան մինչև 182 խմ կեղտաջուրը մաքրեն: Ամեն մի մոդուլ իրենից ներկայացնում է 3 մասից բաղկացած գործարանային արտադրության պլաստմասե «պոլիպրոպիլեն» շիթերից պատրաստված կոմպլեկտ կառույց: Մաքրման կայանը նախատեսվում է տեղադրել ստորգետնյա բետոնե կառույցի մեջ, որտեղ նաև տեղադրվում են օդամղիչները:

Կայանի մարմինը լիովին ջրամեկուսացած է և ունի կափարիչներ: Այս ամենը նպաստում է կայանի կայուն աշխատանքին ամբողջ տարվա ընթացքում՝ անկախ կլիմայական պայմաններից: Թթվածինը դեպի կայան մղվում է օդամղիչների միջոցով, որոնք ապահովում են միջինում մինչև 30°C ջերմաստիճանի բարձրացում, ինչը հնարավոր է դարձնում կենսաբանական արդյունավետ մաքրումը նույնիսկ ձմեռվա ցուրտ ամիսներին: Սեզոնայնության և հոսքի տատանումների գործոնը հաշվի առնելով՝ կայանը նախատեսված է 3 զուգահեռ գծերով, մինչ այդ տեղադրվում է կեղտաջրերի բաշխման հանգույց, որի միջոցով, ըստ անհրաժեշտության, հնարավոր է կարգավորել հոսքը դեպի յուրաքանչյուր գիծ: Կեղտաջրերի առավելագույն հոսքերի պարագայում կայանի ընդհանուր ծանրաբեռնվածությունը նախատեսված է 80%, ինչի շնորհիվ հնարավոր է չեզոքացնել անկանխատեսելի տատանումները, ինչպես նաև գծերից մեկի սպասարկման անհրաժեշտության պարագայում փակել մուտքը դեպի տվյալ գիծ: Մուտքային կեղտաջրերում աղտոտիչների հարաբերակցության ապահովման նպատակով կայանի յուրաքանչյուր գիծ ունի համասեռման փուլ, բացի դրանից կայանի կառուցվածքի և յուրահատուկ բիոֆիլտրերի շնորհիվ բացառվում է չմշակված կեղտաջրի ելքը կայանից, ինչը ապահովում է ելքում կայուն կենսաբանական և քիմիական ցուցանիշներ մուտքում կենցաղային կեղտաջրի փոքր շեղումների պարագայում:

Մաքրման առաջին՝ համասեռացման փուլում կատարվում է սկզբնական աէրացիոն և քայքայման ավելի երկար ժամկետ պահանջվող օրգանական նյութերի մարսում:

Հաջորդը՝ անբացիոն փուլն է, որտեղ կատարվում է բիոլոգիական մաքրում, ԹԿՊ և ԹՔՊ-ի նվազեցում մինչև 95%՝ օգտագործելով միկրոպլազմակներ և բիոֆիլտրեր, վերջինները ունեն հիդրավլիկական և կենսաբանական հարվածների նկատմամբ մեծ առավելություն՝ դիմադրություն: Այս փուլում կատարվում է նաև չնչին քանակությամբ տիղմի ավելացում:

Հաջորդը՝ տիղմի նստեցման փուլն է, որտեղ տիղմը նստում է, ջուրը առանձնանում է և անցնում հաջորդ փուլ, իսկ տիղմը վերադառնում է նախկին փուլ: Պարզեցված ջուրը ինքնահոս կերպով անցնում է ավազի ֆիլտրի միջով, որը բաղկացած է մինչև 100 միկրոմետր խոշորություն ունեցող 3 տարբեր շերտերից: Կախված մասնիկները առանձնացվում են և քլորեցման փուլում վարակազերծվելուց հետո ջուրը արտաձվում է դրենաժային **հոր կամ դրա մի մասը ոռոգման սեզոնին ըստ անհրաժեշտության կօգտագործվի 1905մ նիշից բարձր գտնվող կանաչ տարածքների ոռոգման նպատակով:**

Մաքրման կայանի տեխնիկական բնութագրիչները

Մոդել	Օրեկան կենցաղային կեղտաջրի ծավալ մ ³	Հոսանքի ծախս (կՎտ/ժ)	Երկար. (մ)	Լայն. (մ)	Բարձր. (մ)
FBR-270	270	20	13	9	2.6

Կայանի ելքում երաշխավորվող ջրի ցուցանիշներ՝

Ցուցանիշ	Մգ/լ	ՕԳԳ [%]
ԹԿՊ5	18	96
Կախված մասնիկներ	25	94
ԹՔՊ (բիքրոմատային մեթոդ)	40	92
N-NH4	15	80

Ելքային պարամետրերը երաշխավորվում են հետևյալ պայմանների պահպանման դեպքում՝

- Կայանի տեխնիկական խնդիրների բացակայության և նախատեսված ծավալի չգերազանցման դեպքում
- Կայանի շահագործման և սպասարկման կանոնների պահպանման դեպքում
- Կայանի մուտքային կեղտաջրի ցուցանիշները համապատասխանում են կենցաղային կեղտաջրի սահմանված նորմերին, պահպանված են աղտոտիչների հարաբերակցությունները

- համալիրի տարածքում օգտագործվող լվացող միջոցները/դետերգենտները բացառապես առանց ֆոսֆատների են:

Օդը մատակարարվում է օդամղիչի միջոցով, որը տեղադրվում է կամ կայանի մաս կազմող տեխնիկական հատվածում կամ կայանի հարևանությամբ՝ կախված տեղադրման վայրից: Օդամղիչի սենյակը ապահովված է անընդհատ օդափոխությամբ: Կայանի կարգավորված աշխատանքի պարագայում հոտը բացակայում է, որովհետև այնտեղ տեղի են ունենում աէրոբ գործընթացներ: Օգտագործվող օդամղիչների աղմուկի մակարդակը նշված է շահագործման ձեռնարկում: Օդամղիչը գտնվում է առանձին փակ տարածքում, ուստի կայանի աշխատանքը գրեթե անձայն է:

Կայանը բնական կերպով հասնում է արդյունավետության առավելագույն մակարդակի շահագործման հանձնելուց հետո 1 – 3 ամիսների ընթացքում՝ կախված տարվա եղանակից և մի շարք այլ գործոններից: Սույն գործընթացը հնարավորինս արագացնելու նպատակով շահագործման ժամական կայան են լցվում հատուկ նախատեսված միկրոօրգանիզմներ: Առաջին «թույլ» տիղմը կայանում հայտնվում է աշխատանքի 10-րդ օրը, լինում է բաց շագանակագույն, աստիճանաբար մաքրումը իրականացվում է ավելի բարձր որակով, իսկ ակտիվ տիղմը դառնում է մուգ շագանակագույն և խիտ: Լավ աշխատող կայանի ելքում ունենում ենք պարզված ջուր, առանց որևէ հոտի: Մինչ տիղմի օպտիմալ մակարդակի հասնելը ակտիվացիոն հատվածում նկատելի է ջրում փրփուրների առաջացում: Դրա պատճառն է հանդիսանում սինթետիկ լվացող միջոցների օգտագործումը կենցաղում: Փրփուրը սպիտակ է և ակտիվ տիղմի խտության ավելացմանը զուգահեռ անհետանում է:

Կայանի լիարժեք աշխատանքային ռեժիմ անցնելը վերահսկվում է ակտիվացիոն հատվածի սկզբնամասի ջրի նմուշառման միջոցով:




Ակտիվ տիղմի քանակը պետք է կազմի վերցված նմուշի մոտ 1/3 չափը: Տիղմի՝ 1/3 – ից քիչ լինելը նշանակում է, որ դեռևս բավականաչափ քանակով ակտիվ տիղմ չի գոյացել կայանի մեջ: Եթե քանակը մեծ է, ապա դա նշանակում է կա ակտիվ տիղմի ավելցուկի հեռացման անհրաժեշտություն:

2-3 շաբաթ	- ելքային ջրի վիզուալ ստուգում, գործառույթների, հոսքի ստուգում
1 - 6 ամիս	- ակտիվ տիղմի խտության ստուգում - մեխանիկական մաքրման ֆիլտրի ստուգում/մաքրում
Ըստ անհրաժեշտության 1 - 6 ամսից 1 տարի	- էյրլիֆտի ստուգում/մաքրում - փականների ստուգում - կայանի պատերի, փականների լվացում
1 - 3 տարի	- ընդունող հատվածի մաքրում կուտակված տիղմից

Կայանի անխափան աշխատանքը ապահովելու նպատակով՝ էլեկտրասնուցումը իրականացվելու է հիմնական և պահուստային աղբյուրներից:


Որպես ոլորտը կարգավորող հիմնական իրավական ակտն է դիտարկվել ՀՀՇՆ 40-01.03-2022 «ԿՈՅՈՒՂԻ ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑԵՐ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ»-ը, որում սակայն նման հզորությամբ մաքրման կայանների վերաբերյալ (փոքր արտադրողականությամբ՝ մինչև 5000 բնակիչ ունեցող) տրված են շատ ընդհանրական նկարագրություններ և լիարժեք սահմանված նորմատիվներ չկան: Որպես նորմատիվ պահանջներ նկարագրող իրավական ակտ դիտարկվել է նաև 27 հունվարի 2011 թվականի N 75-Ն ՀՀ կառավարության որոշումը, որում որպես սահմանային շեմ ընդունված է 4-րդ դասի ջուրը (կայանի ելքային ջրերի ցուցանիշները համապատասխանում են դրան), որը թույլատրված է որպես ոռոգման համար պիտանի: Կայանի ՕԳԳ-ի ցուցանիշները երաշխավորվում են արտադրողի կողմից:

Ստորև ներկայացված են մաքրման կայանի գծագրերը



- ① Մուտքի դիտահոր
- ② Մեխանիկական մաքրում
- ③ Մուտքի և համասեռման փուլ
- ④ Աերացիոն փուլ
- ⑤ Նստեցման փուլ
- ⑥ Ավազային ֆիլտր
- ⑦ Վարակազերծում
- ⑧ Տիղմի կուտակման տարողություն
- ⑨ Ելքի դիտահոր
- ⑩ Էլ.կառավարման վահանակ
- ⑪ Օդամղիչներ
- ⑫ Օդամղիչի սենյակ
- ⑬ Դրենաժային հոր

Տնօրեն	Ա. Մկրտչյան		«Քրիստալ Լեյք Նորից» ՍՊԸ-ի կողմից Սեան համայնքի Չկարվիկա և Նորաշեն բնակավայրերի ավտամեք հատվածում կառուցվող հյուրանոցային համալիրի և բազմաֆունկցիոնալ կոնֆերանս կենտրոնի աշտատանքային նախագիծ			
Նախագծեց	Է. հաչատրյան					
			ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ԿՈՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՑՄԱՅԻՆ ՑՄԱՑԵՐ	Փուլ	Թերթ	Թերթեր
				ԱՆ	ՋԿ-43	45
«Նորիլե-Ա.Մ.» ՍՊԸ			Կեղտաջրերի մաքրման կայան՝ 180-270մ ³ /օր Չատակագիծ Ս1:100			



ԿՈՅՈՒՂՈՒ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆ ՕՐԵԿԱՆ 3 x 90 ԽՄ

270 խմ տարողության կոյուղու մաքրման կայանը բաժանված է 3 հավասար մասի մոդուլի: Յուրաքանչյուր մասը մոդուլը օրեկան 90 խմ կեղտաջրի մաքրման հնարավորություն է տալիս: Երբ 3 մոդուլներից 1 մոդուլը ըստ պահանջի չի օգտագործվում, ապա մյուս մոդուլները մինչև վթարված մասի նորոգումը կարող են օրեկան մինչև 182 խմ կեղտաջուրը մաքրեն: Ամեն մի մոդուլը իրենից ներկայացնում է 3 մասից բաղկացած գործարանային արտադրության պլաստմասե «պոլիպրոպիլեն» շիթերից պատրաստված կոմպլեկտ կառույց: Մաքրման կայանը նախատեսվում է տեղադրել բետոնե կառույցի մեջ, որտեղ նաև տեղադրվում են օդամղիչները:

Մաքրման առաջին համասեռացման փուլ, որտեղ կատարվում է սկզբնական աերացիոն և քայքայման ավելի երկար ժամկետ պահանջվող օրգանական նյութերի մաքրում:

Հաջորդը՝ աերացիոն փուլն է, որտեղ կատարվում է բիոլոգիական մաքրում ԹԿՊ և ԹԲՊ-ի նվազեցում մինչև 95% օգտագործելով միկրոպլազմակներ և բիոֆիլտրեր, վերջինները ունեն հիդրավիկական և կենսաբանական հարվածների նկատմամբ մեծ առավելություն դիմադրություն: Այս փուլում կատարվում է նաև չնչին քանակությամբ տիղմի ավելացում:

Հաջորդը տիղմի նստեցման փուլն է, որտեղ տիղմը նստում է, ջուրը առանձնանում է և անցնում հաջորդ փուլ, իսկ տիղմը վերադառնում է նախկին փուլ: Պարզեցված ջուրը ինքնահոս կերպով անցնում է ավազի ֆիլտրի միջով, որը բաղկացած է մինչև 100 միկրոմետր խոշորություն ունեցող 3 տարբեր շերտերից: Կախված մասնիկները առանձնացվում են և քլորեցման փուլում վարակազերծվելուց հետո ջուրը արտաձվում է դրենաժային հոր կամ օգտագործվում ոչ բերքատու ծառերի ոռոգման նպատակով:

- ① Մուտքի դիտահոր
- ② Մեխանիկական մաքրում
- ③ Մուտքի և համասեռման փուլ
- ④ Աերացիոն փուլ
- ⑤ Նստեցման փուլ
- ⑥ Ավազային ֆիլտր
- ⑦ Վարակազերծում
- ⑧ Տիղմի կուտակման տարողություն
- ⑨ Ելքի դիտահոր
- ⑩ Էլ.կառավարման վահանակ
- ⑪ Օդամղիչներ
- ⑫ Օդամղիչի սենյակ
- ⑬ Դրենաժային հոր

Տնօրեն	Ա. Մկրտչյան			«Քրիստալ Լեյք Նորդինգ» ՍՊԸ-ի կողմից Սևան համայնքի Չկարովկա և Նորայշեն բնակավայրերի սպիտակ ջրի հատվածում կառուցվող հյուրանոցային խամուխի և բազմաֆունկցիոնալ կոնֆերանս կենտրոնի աշխատանքային նախագիծ			
Նախագծեց	Է. Խաչատրյան			ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ԿՈՅՈՒՂՈՒ ԱՐՏՆԵՐԻ ՑԱՆՑԵՐ	Փուլ	Թերթ	Թերթեր
					ԱՆ	ՋԿ-44	45
«Նորիլե-Ա.Ս.» ՍՊԸ				Կեղտաջրերի մաքրման կայան՝ 180-270մ ³ /օր Սխեմա Մ1:100			

1.4.2 «ՔՐԻՍՏԱԼ ԼԵՅՔ ՀՈԼՂԻԳՄ» ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑՎԵԼԻՔ ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ (161 ՀԱՄԱՐՈՎ / ՄՈՏ 348 ՏԵՂՈՎ) ԵՎ ԲԱԶՄԱՏՈՒՆԿՅԻՈՆԱԼ ԿՈՆՏԵՐԱՆՍ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՋՐԱՄՍՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ՀԱՇՎԱՐԿ

Ապառողների ջրի ծախսը համաձայն ՀՀՇՆ 40-01. 01-2014 հավելված 3-ի՝

Հյուրանոց՝ 500 հաճախորդի համար (հաշվի առնելով՝ լրացուցիչ այցելուների քանակը, որոնք գիշերակացով չեն, կամ էլ գիշերակացի համար լրացուցիչ անկողիններ տրամադրելու դեպքում)

Սանիտարական սարքերի թիվը $U=640$ սարք. $U=500$

Օրեկան առավելագույն ջրապահանջը՝ 200լ/մարդ (համարների մինչև 25% է կահավորված լոգնոցներով (ванна)), առավելագույն ժամայինը՝ 22.4լ ըստ ՀՀՇՆ 40.01.01.2014 հավելված 3 կետ 5:

Միաժամանակյա օգտագործման գործակիցը՝

$$P^{tot} = 22.4 \times 500 / 3600 \times 0.3 \times 640 = 0.0162 \quad NP = 640 \times 0.0162 = 10.368$$

$$\alpha = 4.244$$

Առավելագույն վայրկյանային ծախսը՝

$$q^{tot} = 5 \times q_0 \times \alpha = 5 \times 0.3 \times 4.244 = \underline{6.36 \text{ ր/րկ}}$$

$$P^c = 12 \times 500 / 3600 \times 0.2 \times 640 = 0.013 \quad NP = 640 \times 0.013 = 8.33$$

$$\alpha = 3.63$$

$$q^c = 5 \times 0.2 \times \alpha = 5 \times 0.2 \times 3.63 = 3.63 \text{ ր/րկ}$$

$$P^h = 10.4 \times 500 / 3600 \times 0.2 \times 437 = 0.0165 \quad NP = 437 \times 0.0165 = 7.22$$

$$\alpha = 3.24$$

$$q^h = 5 \times 0.2 \times \alpha = 5 \times 0.2 \times 3.24 = 3.24 \text{ ր/րկ}$$

Հյուրանոցի առավելագույն ժամային ծախսը՝

$$P^{tot} = \frac{3600 \times P \times q_0}{q_{0hr}} = \frac{3600 \times 0.0162 \times 0.3}{300} = 0.0583$$

$$NP = 640 \times 0.0583 = 37.312 \quad \alpha = 11.15$$

$$q^{tot} = 0.005 \times 300 \times 11.5 = \underline{16.72 \text{ մ}^3/\text{ժամ}}$$

$$P^c = 3600 \times 0.013 \times 0.2 / 200 = 0.0468 \quad NP = 640 \times 0.0468 = 29.95 \quad \alpha = 9.45$$

$$q^c = 0.005 \times 300 \times 9.45 = \underline{9.45 \text{ մ}^3/\text{ժամ}}$$

$$P^h = 3600 \times 0.0165 \times 0.2 / 200 = 0.0594 \quad NP = 437 \times 0.0594 = 25.96 \quad \alpha = 8.447$$

$$q^h = 0.005 \times 200 \times \alpha = 0.005 \times 200 \times 8.447 = \underline{8.45 \text{ մ}^3/\text{ժամ}}$$

Միջին օրեկան ջրապահանջը հյուրանոցի համար՝

$$Q_{c/օր} = q \times U / 1000 = 200 \times 500 / 1000 = 100 \text{մ}^3/\text{օր}$$

$$Q^c = q \times U / 1000 = 100 \times 500 / 1000 = 50 \text{մ}^3/\text{օր}$$

$$Q^h = q \times U / 1000 = 100 \times 500 / 1000 = 50 \text{մ}^3/\text{օր}$$

Հյուրանոցի ռեստորան (Ֆուդ քուր) միաժամանակյա 350 այցելուի համար

2 պայմանական ճաշատեսակի պատրաստումով:

Սան սարքերի թիվը՝ 42

$$U_{օր} = 2.2 \times n \times m \times T \times Y$$

$$U_{ժամ} = 2.2 \times n \times m$$

$$U_{օր} = 2.2 \times n \times m \times T \times Y = 2.2 \times 350 \times 2 \times 12 \times 0.45 = 8316$$

$$U_{ժամ} = 2.2 \times n \times m = 2.2 \times 350 \times 2 = 1540$$

Առավելագույն վայրկյանային ջրապահանջը՝

$$P^{tot} = 12 \times 1540 / 3600 \times 0.3 \times 42 = 0.407 \quad NP = 42 \times 0.407 = 17.11 \quad \alpha = 5.05$$

$$q^{tot} = 5 \times q_0 \times \alpha = 5 \times 0.3 \times 5.05 = 7.58 \text{լ/վրկ}$$

$$P^c = 8 \times 1540 / 3600 \times 0.2 \times 42 = 0.407 \quad NP = 42 \times 0.407 = 17.11 \quad \alpha = 5.05$$

$$q^c = 5 \times 0.2 \times \alpha = 0.005 \times 0.2 \times 5.05 = 5.02 \text{լ/վրկ}$$

$$P^h = 4 \times 1540 / 3600 \times 0.2 \times 19 = 0.0450 \quad NP = 19 \times 0.405 = 8.56 \quad \alpha = 3.02$$

$$q^h = 5 \times 0.2 \times \alpha = 5 \times 0.2 \times 3.02 = 3.02 \text{լ/վրկ}$$

Առավելագույն ժամային ջրապահանջը ռեստորանի համար՝

$$P^{tot} = 3600 \times 0.407 \times 0.3 / 300 = 1.465 \quad NP = 42 \times 1.165 = 61.53 \quad \alpha = 17.03$$

$$q^{tot} = 0.005 \times 300 \times \alpha = 0.005 \times 300 \times 17.03 = 25.5 \text{մ}^3/\text{ժամ}$$

$$P^c = 3600 \times 0.407 \times 0.2 / 200 = 1.465 \quad NP = 42 \times 0.407 = 61.53 \quad \alpha = 17.03$$

$$q^c = 0.005 \times 200 \times \alpha = 0.005 \times 200 \times 17.03 = 17.03 \text{մ}^3/\text{ժամ}$$

$$P^h = 3600 \times 0.405 \times 0.2 / 200 = 1.62 \quad NP = 19 \times 1.62 = 30.78 \quad \alpha = 9.71$$

$$q^h = 0.005 \times 200 \times \alpha = 0.005 \times 200 \times 9.71 = 9.71 \text{մ}^3/\text{ժամ}$$

Միջին օրեկան ջրապահանջը ռեստորանի համար՝

ՀՀ Գեղարքունիքի մարզի օդային ավազանը վնասակար արտանետումների տեսանկյունից գտնվում է համեմատաբար բարվոք վիճակում: Խորհրդային տարիներից հետո չեն գործում վնասակար արտանետումներով արտադրական ձեռնարկությունները, բացառություն են կազմում ասֆալտ արտադրող գործարանները, որոնք աշխատում են պարբերաբար: Հիմնական վնասակար արտանետումները գոյանում են ավտոտրանսպորտի արտանետումներից:

Տարածքի հաշվարկով այս օդային ավազան արտանետումների մակարդակը քիչ է հանրապետության միջինից՝ շուրջ 6.3 անգամ:

Օդային ավազանում հայտնաբերված փոշու քանակությամբ մարզը գտնվում է ոչ բարվոք վիճակում: Արտանետումների անշարժ աղբյուրների 2021 թվականի ձև N 2-տա (Օդ) (տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվությունների համաձայն փոշու արտանետումները բարձր են Գեղարքունիքի և Սյունիքի մարզերում:

Մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտացանց




Մթնոլորտային օդի աղտոտումը կարող է լինել մարդու գործունեության՝ արդյունաբերության, գյուղատնտեսության, թափոնների բաց այրման, ավտոտրանսպորտի օգտագործման և բնական՝ լեռնային փոշու տարածում, բույսերից ցնդող օրգանական միացությունների արտանետման հետևանքով: Մարդու գործունեության հետևանքով մթնոլորտային օդ կարող են արտանետվել տարատեսակ գազեր և տարբեր չափերի մասնիկներ:

Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006 թ. փետրվարի 2-ի N160-Ն որոշմամբ հաստատված աղտոտիչների սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների (ՍԹԿ) համեմատությամբ:

Համաձայն 2022թ. ՀՀ շրջակա միջավայրի վիճակի մասին «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոնի ՊՈԱԿ-ի կողմից հրապարակված տարեկան տեղեկագրի՝ Գեղարքունիքի մարզում 2021թ. անշարժ աղբյուրներից մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի քանակները կազմում են.

- Փոշի- 3303. 11տ/տարի
- Ազոտի օքսիդ/առանց ենթօքսիդի/-124. 24/տարի
- Ծծմբի երկօքսիդ-4. 81տ/տարի

ՀՀ մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի արդյունքները / 2022 թվական



Մթն. օդի աղտոտվածության վերաբերյալ նախագծի տեղամասի առնչվող տվյալները Հիդրոօդերևութաբանության ՊՈԱԿ-ի կայքում բացակայում են, նույնիսկ Սևանի մասին տվյալները շատ սուղ և ընդհանրական են: Սևանում և ողջ Գեղարքունիքի մարզում դիտակետեր ու ճշգրիտ չափումների տվյալներ չկան:

Համաձայն «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումների՝ օդի ֆոնային կոնցենտրացիաները 10-50 և մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար, որոնց թվին են դասվում **համապատասխանաբար Սևան քաղաքի Չկալովկա և Նորաշեն բնակավայրերը**, օդի ֆոնային կոնցենտրացիաներն են.

- Փոշի՝ 0. 095 մգ/մ³
- Ծծմբի երկօքսիդ (SO₂)՝ 0,006 մգ/մ³
- Ազոտի երկօքսիդ (NO₂)՝ 0,033մգ/մ³
- Ածխածնի օքսիդ (CO)՝ 1. 1 մգ/մ³

2.5 Հողային ռեսուրսներ

Գեղամա և Վարդենիսի լեռնաշղթաների ու Սևանա լճի միջև գտնվող վայրերում զգալի հարթ տարածություններ կան, առկա են շատ որակյալ հողեր և նպատակահարմար են հողագործության համար: Դրանք հատկապես Մասրիկ, Արգիճի գետերի ու Գավառագետի հովիտներն են: Դրանցից համեմատաբար ընդարձակը Մասրիկի դաշտն է՝ շուրջ 10000 հեկտար: Այդ հարթ տարածությունները ծովի մակերևույթից ունեն 1900-2200մ բարձրություն:

Տարածքը ներկայացած է միջին բարձրությամբ լեռնաշղթաներով, ուղիղ և ալիքաձև թեքություններով և հարթություններով: Տարածքում գերիշխում են լեռնային սևահողերը, անտառային դարչնագույն հողերը: Մարզի հարավային և արևմտյան հատվածների հողային ծածկույթը հիմնականում ներկայացված է սևահողերով և գետահովտադարավանդային հողերով, իսկ հյուսիսային և հյուսիս-արևելյան հատվածները՝ մարգագետնատափաստանային, անտառային դարչնագույն և անտառային գորշ հողերով:

Տարածաշրջանում լճային նստվածքների վրա ձևավորվել են գետահովտային, մարգագետնացած կոպճային և թույլ զարգացած ավազակոպճային հողագրունտների տիպերը: Ավազանի բնական ցամաքային էկոհամակարգերն են մարգագետինները, տափաստանները, անտառային և նոսրանտառային համակեցությունները, ինչպես նաև ժայռա-քարացրոնային և լճի ջրերից ազատված համալիրները: Մարզի խոշոր հիմնախնդիրներն են՝ հողերի դեգրադացումը, էրոզիան, ավամերձ գոտու անտառների ջրածածկումը: Մարզի հողային ծածկույթի էրոզիայի առավելագույն ցուցանիշները դիտարկվում են արևելյան և հյուսիսային հատվածներում:



Համաձայն Գեղարքունիքի մարզի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի՝ Սևանի տարածաշրջանում մեծ զանգվածներով հանդիպում են տիպիկ միջին հումուսային ալկալացված սևահողերը՝ լեռնային սևահողերի ենթատիպով: Հումուսի պարունակությունը կազմում է 8-12%: Լեռնային սևահողերն ունեն հումուսի մեծ պաշար՝ 0-60սմ խորության վրա հումուսի պաշարները կազմում են 360տ/հա:

Ռեակցիան վերին հորիզոններում թույլ հիմնային է, ներքևում՝ չեզոք:

Լեռնային սևահողերն օգտագործվում են մեծ մասամբ որպես խոտհարք և արոտավայր, իսկ տեղ-տեղ նաև որոշ գյուղատնտեսական կուլտուրաների մշակման համար (գարի, երկարամյա խոտեր):

Հանքաբանական կազմում գերակշռում են թեթև և միջին շրջանի միներալներ:

Համաձայն ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կաթիլային և անձրևացմամբ ոռոգման նորմերի մշակման ատլասի՝ Սևանի ավազանի գոտում առանձնացված է՝ երկու գոտի՝ առաջին գոտու մեջ մտնում են Գեղարքունիքի մարզի մինչև 2000 մ բարձրությունների վրա տեղաբաշխված տարածքները: Հողաձածկույթը կազմում են կարբոնատային և տիպիկ լեռնային սևահողերը: Ըստ մեխանիկական կազմի՝ միջակ

և ծանր կավավազային հողեր են: Հողի միջին խտությունը տատանվում է 1,18-1,22գ/սմ³ սահմաններում, հողի տեսակարար կշիռը՝ 2,63-2,70 գ/սմ³ սահմաններում, հողի ծակոտկենությունը՝ 54,8- 55,1 % սահմաններում:

Ոռոգման երկրորդ գոտին ներառում է Գեղարքունիքի մարզի այն տարածքները, որոնք տեղաբաշխված են 2000 մ-ից ավելի բարձրությունների վրա: Այս գոտում հանդիպում են կրազերծված սևահողերը և սևահողանման լեռնային մարգագետնատափաստանային հողերը: Ըստ մեխանիկական կազմի՝ միջակ և ծանր կավավազային հողեր են: Հողի խտությունը տատանվում է 1,17-1,21 գ/սմ³ սահմաններում, հողի տեսակարար կշիռը՝ 2,52-2,59 գ/սմ³ սահմաններում, հողի ծակոտկենությունը՝ 53,2-53,6 % սահմաններում:

Հողի աղտոտման հիմնական աղբյուրներն են մետաղաձուլական գործարանների և արդյունաբերական այլ ձեռնարկությունների թափոնները, գյուղատնտեսությունը, տրանսպորտը: Մարդու գործունեության հետևանքով առաջանում է հողային ծածկույթի աղտոտում ծանր մետաղներով (պղինձ, ցինկ, արսեն, կապար, մոլիբդեն, մանգան, նիկել, կադմիում, քրոմ և այլն) և ցիանական միացություններով: Հողերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն

հրամանի և ՀՀ Առողջապահության նախարարի 2015թ. հունիսի 16-ի «ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 25-Ն հրամանի համաձայն:

«Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2022թ.տարեկան ամփոփ և 2023թ. եռամսյակային տեղեկագրերում Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի հողային ռեսուրսների աղտոտվածության վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է: 2023 թվականի 3-րդ եռամսյակում հողային ծածկույթի՝ ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներն իրականացվել են միայն Գեղարքունիքի մարզի Զիլի հանքային դաշտում:

Նախագծի տարածքի Սևան-Գավառ ա/ճ աջ կողմում ընկած հատվածում («Սևան» ԱՊ սահմաններից դուրս է) գերազանցապես տարածված են սևահողերը, որտեղ հզորությունը տատանվում է 0.3-0.6մ սահմաններում: Առանձին հատվածներում դիտվում են հողերի խիստ քարքարոտ տարբերակներ, որտեղ մակերեսի զգալի մասը ծածկված է բազալտի տարաչափ կտորներով:

Սևան-Գավառ ա/ճ ձախ կողմում ընկած տարածքներում սևահողերը տարածված են հիմնականում «Սևան» ԱՊ տարածքից դուրս ընկած հատվածներում, 0.2-0.3մ հզորությամբ՝ նախատեսվող կաթսայատան, էլեկտրատեղակայանի և ավտոկայանատեղիի հատվածներում, իսկ նախատեսվող հյուրանոցային համալիրի և կոնֆերանս կենտրոնի միջակայքը ներկայանում է հիմնականում սպիակավուն ավազներով՝ միջինը 1.0մ հզորությամբ, այստեղ որոշ հատվածներում մերկանում են նաև ժայռաբեկորային կղզյակներ:

Կոնֆերանս կենտրոնի տեղամասը ներկայանում է հիմնականում հողային շերից զուրկ տեսքով, ժայռային, ժայռաբեկորային և ավազային մակերեսներով:

Հյուրանոցային համալիրի տեղամասի Սևան-Գավառ ա/ճ-ին մոտ ընկած հատվածում նկատվում է սևահողի փոքր հզորությամբ շերտ, իսկ դեպի լիճ տարածվող հատվածը ներկայանում է հիմնականում ավազներով, խճով և ժայռային մակերեսներով:

2. 6 Ջրային ռեսուրսներ

Տարածաշրջանի ամենամեծ ջրային ռեսուրսը Սևանա լիճն է:

Սևանա լիճ. Սևանա լիճը գտնվում է ծովի մակարդակից մոտ 1900մետր բարձրության վրա: Այն աշխարհի քաղցրահամ ջուր ունեցող 2-րդ բարձրադիր լիճն է: Հնում հայտնի է եղել Գեղամա ծով, Գեղարքունյաց ծով անուններով: Լիճը գոյացել է հրաբխային գործունեության հետևանքով՝ միջլեռնային տեկտոնական իջվածքում սառցադաշտային և ձնհալոցքային ջրեր լցվելու արդյունքում: Չորս կողմում շրջապատում են Արեգունու, Սևանի, Վարդենիսի և Գեղամա լեռները:

Սևանա լիճը, Հայաստանի Հանրապետության համար ունի գեոքաղաքական մեծ նշանակություն, որպես տարածաշրջանային քաղցրահամ ջրի միակ հսկայական աղբյուր, ունի կլիմայագոյացնող կարևոր նշանակություն ինչպես հանրապետության, այնպես էլ տարածաշրջանային և գլոբալ առումով: Լիճը Արտանիշի և Նորատուսի հրվանդանների միջև ձգված ստորջրյա պատնեշով՝ Շորժայի թմբով, բաժանվում է երկու մասի՝ հարավ-արևելյան կամ Մեծ Սևան, հյուսիս-արևելյան կամ Փոքր Սևան:

Համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի 3 մարտի «ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՏՈՒՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆԵ N 177-Ն որոշման՝ լճի երկարությունը 70 կմ է, առավելագույն լայնությունը՝ 55 կմ: Հայելու մակերեսը կազմում է 1260 կմ², որով ամենախոշորն է Հարավային Կովկասի տարածքում: Ափի շրջագիծը մոտ 230 կմ է, միջին խորությունը 26.8 մ է, ամենախորը վայրը՝ 83,3 մ (Փոքր Սևան): Լիճը գտնվում է Երևան քաղաքից մոտ 60 կմ հեռավորության վրա: Սևանա լիճ են թափվում 28 գետ և գետակ, որոնցից 4-ը՝ Փոքր Սևան, 24-ը՝ Մեծ Սևան: Լճից սկիզբ է առնում միայն Հրազդան գետը: Վերջինիս շնորհիվ ջրերի տարեկան արտահոսքը կազմում է 0.7 կմ³:

Սևանա լճի ավազանի տարբեր հատվածներ աչքի են ընկնում տարբեր կլիմայական պայմաններով: Սևանա լճի ավազանում ձնածածկը ձևավորվում է նոյեմբերի կեսերին, կայուն ծածկը՝ դեկտեմբերի սկզբին, իսկ նրա հալոցքը սկսվում է մարտի սկզբից և վերջանում ապրիլի վերջին: Օդի հարաբերական խոնավությունը ենթակա է օրական և սեզոնային տատանումների: Ձմռանը միջին հարաբերական խոնավությունը Փոքր Սևանում կազմում է 70-75 %, Մեծ Սևանում՝ 80-85%, ամռանը՝ համապատասխանաբար Փոքր Սևանում՝ 65%, Մեծ Սևանում՝ 75%:

Լճի ջրահավաք ավազանում մթնոլորտային տեղումները, կախված են տեղանքի բարձրությունից՝ տարեկան 400մմ-ից (լճի առափնյա շրջանում) մինչև 900 մմ-ի (շրջապատի լեռների մերձագագաթային շրջանում), միջինը՝ 500-600 մմ: Տարվա ընթացքում լճի հայելու վրա տեղումների միջին քանակը կազմում է 390 մմ:

Համաձայն 2014թ. «Կենսաբանական բազմազանության մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի

5-րդ ազգային զեկույցի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվել և իրականացվում են Սևանա լճի և ջրհավաք ավազանի էկոհամակարգերի պահպանության, էկոլոգիական հավասարակշռության վերականգնման և կենսաբազմազանության բնականոն զարգացման ու բնական պաշարների կայուն օգտագործման միջոցառումներ: Սևանա լճի ավազանի համայնքների զգալի մասում ոռոգման նպատակով հիմնականում օգագործվում են Սևանա լիճ թափվող գետերի ջրերը, որոնց մեծ մասը անկանոն և չվերահսկվող ոռոգման հետևանքով ամառային ամիսներին ցամաքում են՝զգալի վնաս հասցնելով գետերում ձվադրող ձկնատեսակներին՝ Սևանի կողակին, Ամառային իշխանին, Գեղարքունիքի և Սևանի բեղլուին, որոնք կորցնում են բազմացման համար անհրաժեշտ միջավայրը և պայմանները:

Սևանա լճի համար գերխնդիր է նաև հարակից բնակավայրերից, արտադրական օբյեկտներից և լճի շուրջը կառուցապատված հանգստյան տներից լիճ թափվող կեղտաջրերի խնդիրը՝ մարզի արտանետվող կեղտաջրերի շուրջ 80%-ը չեն մաքրվում: Մաքման կայանների նախատեսումը և ավիամերձ ջրածածկ հատվածների մաքրումը Սևանա լճի համար խիստ անհրաժեշտություն է:

Սևանա լճի մակարդակի բարձրացման հետևանքով լճի ավիամերձ տարածքները ջրածածկվում են, ինչի հետևանքով ջրի տակ են մնում անտառածածկ հատվածներ՝հսկայական ծառեր, թփեր, ծառերի արմատներ, շենքեր, շինություններ, ճանապարհներ և տարբեր ենթակառուցվածքներ: Պետբյուջեի միջոցներով ջրածածկ անտառաթփային տարածքները շարունակաբար մաքրվում են:


Համաձայն կազմակերպության կողմից 2024 թվականի 1-ին եռամսյակում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է հանրապետության 51 գետի, Ախուրյանի, Երևանյան լիճ և Կեչուտի ջրամբարների, Արփա-Սևան ջրատարի և Սևանա լճի 14 դիտակետում՝ հիմնականում անիոնների և կատիոնների, սնուցող նյութերի և ծանր մետաղների առկայությունը որոշելու համար: 2024թ. 1-ին եռամսյակում Սևանի ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 17 դիտակետում. այդ թվում՝ 12 գետային. 4 լճային (Սևանա լիճ) և 1 ջրանցքում:

2024 թվականի հունվարի 1-ին Սևանա լճի մակերեսը կազմել է 1275.372 կմ², ծավալը 37.7563 կմ³, իսկ մարտի 31-ին համապատասխանաբար՝ 1275.943 կմ² և 37.8327 կմ³:

Շրջակա միջավայրի և մարդու առողջության համար կարևոր է ջրային ռեսուրսների որակական հատկանիշների պահպանումը: Զրային ռեսուրսների աղտոտման պատճառ են հանդիսանում կոմունալ-կենցաղային, արդյունաբերության,

հանքարդյունաբերության և գյուղատնտեսության կեղտաջրերը, հողահանդակներից անձրանջրերի միջոցով տեղափոխված պեստիցիդները, վնասակար նյութերը և այլն: Հայաստանի հանրապետությունում ջրային ռեսուրսների մոնիթորինգն իրականացվում է շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերնոլոգիայի և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Սևանա լճի ջրի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ՋՏԿ-ի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» N75-Ն որոշման համաձայն (Հավելված 5), ընդհանրական գնահատման ցուցանիշի դասով՝ 1-5: Սևանի կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակ

22 Սևանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը



ՀՀ շրջակա միջավայրի մոնիթորինգի տեղեկագրի՝ 2024թ. 1-ին եռամսյակում գետերում կատարված դիտարկումների արդյունքների՝ Արփա-Սևան ջրատարի ջրի որակը Ծովինար գյուղից հարավ-արևելք հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «միջակե (3-րդ դաս):

Համաձայն «Հիդրոոդերնոլոգիայի և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2024թ. 1-ին եռամսյակի տեղեկագրի՝ Մեծ Սևանի 22-րդ կայանի մոտ մակերևութային

շերտում ջրի որակը մարտին գնահատվել է «անբավարարե (4-րդ դաս), 0.5մ խորության շերտում ջրի որակը փետրվարին և մարտին գնահատվել է «անբավարարե (4-րդ դաս), 5մ, 10մ, 25մ և 30մ խորության շերտերում ջրի որակը փետրվարին գնահատվել է «միջակե (3-րդ դաս), մարտին՝ «անբավարարե (4-րդ դաս), 20մ խորության շերտում ջրի որակը փետրվարին և մարտին գնահատվել է «անբավարարե (4-րդ դաս): Փոքր Սևանի 4-րդ կայանի մոտ մակերևութային շերտում ջրի որակը մարտին գնահատվել է «անբավարարե (4-րդ դաս), 0.5մ, 5մ, 10մ, 20մ, 30մ, 55մ, 70մ և 80մ խորության շերտերում ջրի որակը փետրվարին և մարտին գնահատվել է «անբավարարե (4-րդ դաս): Փոքր Սևանի Այրիվանքի մոտ մակերևութային և 5մ, 10մ, 20մ, 30մ և 40մ խորության շերտերում ջրի որակը փետրվարին և մարտին գնահատվել է «անբավարարե (4-րդ դաս):

Ստորև ներկայացվում է Սևանա լճի որակը 2024թ. 1-ին եռամսյակի արդյունքներով:

Փետրվար

Ջրային ռեսուրս, խորություն	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի կարգավիճակի դասը ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների	Ջրի կարգավիճակի ընդհանրական դասը ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների
Մեծ Սևան (22-րդ կայանի մոտ), 0.5մ խորություն	ԹՔՊ, մանգան, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
Մեծ Սևան (22-րդ կայանի մոտ), 5մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, մանգան, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	3-րդ
Մեծ Սևան (22-րդ կայանի մոտ), 10մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, մանգան, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	3-րդ
Մեծ Սևան (22-րդ կայանի մոտ), 20մ խորություն	Ամոնիում իոն, մանգան, բոր, ալյումին, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	ԹՔՊ	4-րդ	
Մեծ Սևան (22-րդ կայանի մոտ), 25մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, մանգան, ալյումին, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	3-րդ
Մեծ Սևան (22-րդ կայանի մոտ), 30մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, մանգան, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	3-րդ
Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 0.5մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, կիտրիտ իոն, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Մանգան	4-րդ	
Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 5մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Կիտրիտ իոն, մանգան	4-րդ	
Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 10մ խորություն	ԹՔՊ, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, մանգան	4-րդ	
Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 20մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Մանգան	4-րդ	

Ջրային տեսուրս, խորություն	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի կարգավիճակի դասը ստացված ֆիզիկաքիմիական բնութագրիչներին	Ջրի կարգավիճակի ընդհանրական դասը ստացված ֆիզիկաքիմիական բնութագրիչներին
Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 30մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Մանգան	4-րդ	
Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 55մ խորություն	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Մանգան	4-րդ	
Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 70մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Մանգան	4-րդ	
Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 80մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Մանգան	4-րդ	
Փոքր Սևան (Այրիվանքի մոտ), մակերևույթից	ԹՔՊ, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, մանգան	4-րդ	
Փոքր Սևան (Այրիվանքի մոտ), 5մ խորությունից	ԹՔՊ, բոր, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, մանգան	4-րդ	
Փոքր Սևան (Այրիվանքի մոտ), 10մ խորությունից	ԹՔՊ, ամոնիում իոն, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Մանգան	4-րդ	
Փոքր Սևան (Այրիվանքի մոտ), 20մ խորությունից	ԹՔՊ, ամոնիում իոն, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Մանգան	4-րդ	
Փոքր Սևան (Այրիվանքի մոտ), 30մ խորությունից	ԹՔՊ, ամոնիում իոն, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Մանգան	4-րդ	
Փոքր Սևան (Այրիվանքի մոտ), 40մ խորությունից	ԹՔՊ, ամոնիում իոն, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Մանգան	4-րդ	

Ջրային ռեսուրս, խորություն	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի կարգավիճակի դաս բառ ֆիզիկաքիմիական բնութագրիչների	Ջրի կարգավիճակի ընդհանրական դաս բառ ֆիզիկաքիմիական բնութագրիչների
Մեծ Սևան (22-րդ կայանի մոտ), մակերևութից	ԹՔՊ, մանգան, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Անոնիում իոն	4-րդ	
Մեծ Սևան (22-րդ կայանի մոտ), 0.5մ խորություն	ԹՔՊ, մանգան, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Անոնիում իոն	4-րդ	
Մեծ Սևան (22-րդ կայանի մոտ), 5մ խորություն	ԹՔՊ, մանգան, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Անոնիում իոն	4-րդ	
Մեծ Սևան (22-րդ կայանի մոտ), 10մ խորություն	ԹՔՊ, մանգան, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Անոնիում իոն	4-րդ	
Մեծ Սևան (22-րդ կայանի մոտ), 20մ խորություն	ԹՔՊ, մանգան, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Անոնիում իոն	4-րդ	
Մեծ Սևան (22-րդ կայանի մոտ), 25մ խորություն	ԹՔՊ, մանգան, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Անոնիում իոն	4-րդ	
Մեծ Սևան (22-րդ կայանի մոտ), 30մ խորություն	ԹՔՊ, մանգան, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Անոնիում իոն	4-րդ	
Փոքր Սևան, (4-րդ կայանի մոտ) մակերևութից	ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Անոնիում իոն, մանգան	4-րդ	
Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 0.5մ խորություն	Անոնիում իոն	3-րդ	4-րդ
	Մանգան	4-րդ	
Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 5մ խորություն	ԹՔՊ, անոնիում իոն	3-րդ	4-րդ
	Մանգան	4-րդ	
Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 10մ խորություն	ԹՔՊ, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Անոնիում իոն, մանգան	4-րդ	
Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 20մ խորություն	ԹՔՊ, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Անոնիում իոն, մանգան	4-րդ	
Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 30մ խորություն	ԹՔՊ	3-րդ	4-րդ
	Մանգան	4-րդ	
Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 55մ խորություն	ԹՔՊ, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Անոնիում իոն, մանգան	4-րդ	
Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 70մ խորություն	ԹՔՊ, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Անոնիում իոն, մանգան	4-րդ	

Ջրային ռեսուրս, խորություն	Ջրի ռաակի ցուցանիշ	Ջրի կարգավիճակի դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների	Ջրի կարգավիճակի բնդիաներական դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների
Փոքր Սևան (4-րդ կայանի մոտ), 80մ խորություն	ԹՔՊ, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Անոնիում իոն, մանգան	4-րդ	
Փոքր Սևան (Այրիվանքի մոտ), մակերևութից	ԹՔՊ, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Անոնիում իոն, մանգան	4-րդ	
Փոքր Սևան (Այրիվանքի մոտ), 5մ խորությունից	ԹՔՊ, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Անոնիում իոն, մանգան	4-րդ	
Փոքր Սևան (Այրիվանքի մոտ), 10մ խորությունից	ԹՔՊ, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Անոնիում իոն, մանգան	4-րդ	
Փոքր Սևան (Այրիվանքի մոտ), 20մ խորությունից	ԹՔՊ, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Անոնիում իոն, մանգան	4-րդ	
Փոքր Սևան (Այրիվանքի մոտ), 30մ խորությունից	ԹՔՊ, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Անոնիում իոն, մանգան	4-րդ	
Փոքր Սևան (Այրիվանքի մոտ), 40մ խորությունից	ԹՔՊ, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Անոնիում իոն, մանգան	4-րդ	

Համաձայն «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոննե ՊՈԱԿ-ի կողմից տպագրված 2024թ. 1-ին եռամսյակի տեղեկագրերի՝ կատարվել են Սևանի ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 17 դիտակետում. այդ թվում՝ 12 գետային. 4 լճային (Սևանա լիճ) և 1 ջրանցքում: Որոշ օպերատիվ դիտակետերի դիտարկումներից ստացված ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են աղյուսակում:

Աղյուսակ 9. Սևանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր. մ ³ /վ								
		հունվար			փետրվար			մարտ		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Չկնազետ	Ծովազյուղ	0.19	0.20	95	0.25	0.24	104	0.41	0.73	56
Մասրիկ	Ծովակ	2.15	2.53	85	2.21	2.59	85	2.43	2.97	82
Մարտունի	Գեղհովիտ	0.58	0.74	78	0.58	0.73	79	0.72	0.80	90
Արգիճի	Վ.Գետաշեն	2.56	2.29	112	2.47	2.29	108	2.79	2.81	99
Գավառազետ	Նորատուս	2.28	2.97	77	2.47	2.93	84	2.93	3.30	89

2.7 Համայնքի կլիմայական պայմանները


Համայնքը ունի չոր, մայրցամաքային կլիմա: Կլիմայի առանձնահատկությունների ձևավորման հարցում մեծ դեր են խաղում աշխարհագրական դիրքը, ռելյեֆի առանձնահատկությունները, տարածքի պաշտպանվածությունը բարձր լեռնային զանգվածներով, Սևանա լճին մոտ լինելու հանգամանքը:

Կլիման բնորոշվում է հիմնականում կարճատև զով ամառով և համեմատաբար երկարատև ցուրտ ձմեռով: Ստորև տրվում են միջինացված կլիմայական հարաչափերը՝

- Բացարձակ առավելագույն ջերմաստիճանը +32.9, ամենատաք ամիսներն են Հուլիս, Օգոստոս:
- Բացարձակ նվազագույն ջերմաստիճանը -32.5, ամենացուրտ ամիսներն են՝ Հունվար և Փետրվար:
- Տարեկան մթնոլորտային տեղումների միջին քանակությունը 531 մմ.:
- Ձյան ծածկոցի միջին հզորությունը 80սմ, ճնշումը 150 կգո/մ²:
- Գրունտի սառչման առավելագույն խորությունը 114սմ.:
- Գերակշռում են հիմնականում արևմտյան և հյուսիս-արևմտյան ուղղության քամիները 3.2 մ/վրկ միջին արագությամբ, 20 տարին մեկ անգամ հնարավոր են 28 մ/վրկ ուժգնության քամիներ:
- Տարեկան միջին օդի խոնավությունը կազմում է 72%:
- Տարվա ընթացքում տարածաշրջանում դիտվում է արևափայլի մեծ տևողություն (2697 ժամ), ինչպես նաև ուլտրամանուշակագույն ճառագայթների տարեկան դրական բալանս:

Համաձայն ՀՀՇՆ 22-01-2024 (Շինարարական կլիմայաբանություն) տեղամասը գտնվում է ՀՀ կլիմայական շրջանացման ցուրտ կլիմայական գոտու մեջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԵՐՁԱՆԱՑՈՒՄԸ ԵՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ



Աղյուսակ 1.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը «Սևան լճային» օդերևութաբանական կայանի փվյալներով

Օդերևութաբանական կայանը	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C°												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Սևան լճային	-5.3	-5.0	-1.7	4.0	8.7	12.9	16.1	16.3	13.1	8.2	2.4	-2.7	5.6	-32.5	32.9

Աղյուսակ 1.2 Օդի հարաբերական խոնավությունը «Սևան լճային» օդերևութաբանական կայանի փվյալներով

Օդերևութաբանական կայանը	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12		Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին

Աղյուսակ 1.3. Մթնոլորտային տեղումները «Սևան լճային» օդերևութաբանական կայանի փվյալներով

Օդերևութաբանական կայանը	Տեղումների քանակը Միջին ամսական / օրական առավելագույն, մմ												Տարեկան	Տեղումների քանակը	
	Ըստ ամիսների													Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ - հոկտեմբեր ամիսներին, մմ
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Սևան լճային	18	24	38	64	89	78	54	37	33	47	31	18	531	129	402
	22	23	37	30	43	41	43	52	37	36	31	16			

Աղյուսակ 1.3.1 Ձյան ծածկույթ «Սևան լճային» և «Սևան քաղաք» օդերևութաբանական կայաններիի տվյալներով (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Ձյան ծածկույթը			
	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ
Սևան լճային	71	121	-	-
Սևան քաղաք	93	136	252	114

Աղյուսակ 1.4. Քամու հաշվարկային արագությունը «Սևան լճային» օդերևութաբանական կայանի տվյալներով

Բնակավայրի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով վերջին օրերի թիվը (≥15մ/վ)	Հաշվարկային արագությունը (մ/վ), որը հնարավոր է մեկ անգամ «ո» տարիների ընթացքում		
				25	50	100
Սևան լճային	807.8	3.6	36	24	26	28

Աղյուսակ 1.4.1 Քամու պարամետրերը Սևան օդերևութաբանական կայանի տվյալներով

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային խոշոր, (հՊա)	Ամիսներ	Կրկնելիություն, % /միջին արագություն, մ/վրկ ըստ ուղղությունների								Անհողմությունների արևմտյան %	Միջին ամսական արագություն մ/վրկ	Միջին տարեկան արագություն մ/վրկ	Ուժեղքամերով ("15 մ/վ" օրերի քանակը)	Հաշվարկային արագությունը, մ/վրկ հնարավոր է նվազագույն "ո" տարիները ընթացքում		
			Հյուսիսային (Հս)	Հյուսիսարևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավարևելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավարևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիսարևմտյան (ՀսԱրմ)					20	50	100
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Սևան	805,5	Հունվար	3	2	2	2	1	7	58	25	13	4,2	3,3	25	24	26	28
			4.1	4.0	3.3	2.7	2.9	5.3	5.4	3.7							
		Ապրիլ	5	9	23	8	4	16	28	7	20	3,3					
			3.9	3.7	3.2	2.5	3.8	6.3	5.5	3.4							
		Հուլիս	18	35	31	6	3	2	3	2	17	3.1					
			4.7	4.1	3.2	2.7	2.1	2.5	3.1	2.8							
Հոկտեմբեր	7	5	7	3	4	15	45	14	33	2,7							
	4,0	3,8	2,7	2,2	2,3	5,3	4,3	2,7									

2.8 Բուսական և կենդանական աշխարհ

Բուսական աշխարհ. Սևանի ավազանի բնական ցամաքային էկոհամակարգերն են՝ մարգագետինները, տափաստանները, անտառային և նոսրանտառային համակեցությունները, ինչպես նաև ժայռա-քարացրոնային և լճի ջրերից ազատված համալիրները:

Նախատեսվող գործունեության տարածաշրջանը հիմնականում տափաստանային է, տափաստաններին բնորոշ բուսականություն հատիկաբուսականության ժրակշռությամբ, բլրի արանքներում և քարակույտերի մոտ թփերի առկայությամբ:

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է «Սևան» ազգային պարկի տարածքում և դրան հարող սեփականության իրավունքով պատկանող տարածքներում:

Ազգային պարկում և դրա պահպանական գոտում հայտնի են շուրջ 60 բուսատեսակներ, որոնք օգտագործվում են կամ կարող են օգտագործվել որպես դեղաբույսեր: Շուրջ 100 բուսատեսակներ համարվում են ուռելի: Պարկի և դրա պահպանական գոտու տարածքից հայտնի են նաև 267 տեսակի, ենթատեսակի և ձևերի մակրոմիցետներ (պարկի տարածքում՝ 121 տեսակ, պահպանական գոտում՝ 228 տեսակ): Նշված մակրոսկոպիկ սնկերից շուրջ 100 տեսակը ուռելի են, որոնցից առավելապես տարածված են հետևյալները՝ ականջասունկ սովորական կամ կախասունկ (*Pleurotus ostreatus*), յուղասունկ հատիկավոր (*Suillus granulatus*), շեկլիկ (*Lactarius deliciosus*), աղվեսասունկ (*Cantharellus cibarius*), կոճղասունկ մարգագետնային (*Marasmius oreades*), շամպինյոն սովորական (*Agaricus campestris*), շամպինյոն դաշտային (*Agaricus arvensis*), գոմաղբասունկ սպիտակ, փրչոտ (*Coprinus comatus*), շարքասնկերից (*Tricholomataceae*) կոճղասունկ աշնանային (*Armillaria mellea*), լեպիստա մանուշակագույն ոտիկով (*Lepista personata*), շարքասունկ հողամոխր ագույն (*Tricholoma terreum*): Բացի այդ, հանդիպում են նաև 58 տեսակի մակրոսկոպիկ սնկեր, որոնք ունեն բուժիչ հատկություններ: 24 տեսակի սնկեր թունավոր են: Դրանցից են՝ խոզուկասունկ (*Paxillus involutus*), կեղծ կոճղասունկ (*Hypholoma fasciculare*), ճանճասպան հովազային (*Amanita pantherina*), շամպինյոն 1411 դեղնամաշկ (*Agaricus xanthodermus*), գոմաղբասունկ թեփուկավոր (*Coprinus picaceus*), սարդոստայնասնկեր (*Cortinarius*), թեփկասնկեր (*Inocybe*), շարքասնկեր (*Tricholoma*) ցեղերի որոշ տեսակներ և այլն:

Ռելիեֆային առանձնահատկությունների շնորհիվ Սևանի ավազանի բուսականությունն ունի վառ արտահայտված մոզաիկ բնույթ: Ցածրադիր վայրերում աչքի են ընկնում անապատները ու կիսաանապատները, որոնք առաջացել են լճից ազատված ավազուտների վրա և ունեն երկրորդային ծագում: Այդ տեսակներից որպես ռելիկտային համակեցություններ պահպանվել են՝ տորֆային ճահճուտները, քարացրոնային և ժայռային բուսական խմբավորումները, փոփոխ թփուտները՝ ցածրաճ գիհուտներ (*Juniperus depressa*) և այլն: Տարածաշրջանում հանդիպող բուսատեսակները ներկայացված են ստորև աղյուսակում:

Աղյուսակում ընդգրկված բույսերի որոշ տեսակները ներկայացված են նկարում:

Տարածաշրջանում հանդիպող բուսատեսակները

№	Բույսի հայերեն անվանումը	Բույսի լատիներեն անվանումը
1	Ազնվամորի	Rubus idaeus
2	Աղվեսագի եղեգանման	Alopecurus arundinaceus
3	Անթառամ ոսկեգույն	Helichrysum callichrysum
4 33	Սառնուկի անտեռնոս Սրոհունդ խոցված	Շնրաթա Hypericum perforatum
34	Սրոհունդ մշտիկատերևանման	Hypericum hyssopifolium
35	Մասրենի Զրաչի	Rosa hrachiana
36	Մասրենի առատափուշ	Rosa spinosissima
37	Վիկ մկան	Vicia cracca
38	Տանձենի կովկասյան	Pyrus caucasica
39	Տուղտավարդ թավրիզյան	Alcea tabrisiana
40	Փրփրուկ վեցաթերթ	Filipendula hexapetala
41	Օշինդր արևելյան	Artemisia orientalis
42	Օշինդր դառը	Artemisia absinthium
13	Լոշտակ սպիտակ	Bryonia alba
14	Խատուտիկ Ստեփենի	Taraxacum stevenii
15	Ծորենի սովորական	Berberis vulgaris
16	Կակաչ արևելյան	Papaver orientale
17	Կակաչ հայկական	Papaver armeniacum
18	Կակաչ սակավատերև	Papaver paucifoliatum
19	Կատվադաղձ մերկ	Nepeta nuda
20	Կատվադաղձ Մուսիկի	Nepeta mussini
21	Կատվախոտ դեղատու	Valeriana officinalis
22	Չազարատերևուկ սովորական	Achillea millefolium
23	Չիրիկ փոքր	Iris pumila
24	Մատիտեղ ճնճղուկի	Polygonum aviculara
25	Մատուռնի ուղիղ	Potentilla recta
26	Նեղտերևի	Chamaenerium angustifolium
27	Շուշանաբանջար սոխուկավոր	Chaerophyllum bulbosum
28	Շուշանաբանջար ոսկեզոծ	Chaerophyllum aureum
29	Պտեր արական	Dryopteris filix mas
30	Սեզ սպիտակ	Agrostis alba
31	Սիզախոտ մարգագետնային	Phleum pratense
32	Սրոհունդ ալպիական	Hypericum alpestre



Տուլտավարդ թավրիզյան - *Alcea tabrisiana*



Սրտունդ մշտիկատերևաման - *Hypericum hyssopifolium*



Միզախոտ մարգագետնային - *Phleum pratense*



Փրփրունկ վեցաթերթ - *Filipendula hexapetala*



Միզախոտ մարգագետնային - *Phleum pratense*



Փրփրունկ վեցաթերթ - *Filipendula hexapetala*



Մատիտեղ ճնճղուկի - *Polygonum aviculare*



Ասպիրակ աղեղնեզր - *Spiraea crenata*



Կակաչ արևելյան - *Papaver orientale*



Կատվադաղձ Մուսիկի - *Nepeta mussini*

Տարածաշրջանում լայն տարածում ունեն Ազնվամորու (*Rubus idaeus*), Վարդ առատափուշի (*Rosa spinosissima*), Մասրենի Հրաչի (*Rosa hrachiana*) և Ասպիրակ աղեղնեզրի (*Spiraea crenata*) մացառուտները, որոնց արանքներում հանդիպում են Ծորենի սովորականը (*Berberis vulgaris*) և Լոշտակ սպիտակը (*Bryonia alba*): Տարածաշրջանում հանդիպում են նաև՝ Տանձենի կովկասյան (*Pyrus caucasica*), Արոսենի սովորական (*Sorbus aucuparia*) և Դժնիկ լուծողական (*Rhamnus cathartica*) ծառեր: Ավելի հարավ ընկած տարածություններում տարածված են գիհու և կաղնու անտառների հիմնական խմբավորումները: Տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ կարմիր գրքում և ԲՊՄՄ Կարմիր ցուցակում գրանցված բուսատեսակների ցուցակը բերված է ստորև աղյուսակում, իսկ դրանց լուսանկարները՝ նկարում:

Տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ՝

№	Բուսատեսակ		ԲՊՄՄ-ի Կարմիր ցուցակում ունեցած կատեգորիան ⁴
	Հայերեն	Լատիներեն	
1	Անողնուցուկ Գրոսհեյսի	<i>Puccinellia grossheimiana</i> V.I.Krecz.	EN
2	Արոսենի հայաստանյան	<i>Sorbus hajastana</i> Gabr.	VU

Տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված հազվագյուտ, անհեղացող բուսատեսակների լուսանկարները



Արոսենի հայաստանյան - *Sorbus hajastana* Gabr.



Անողնուցուկ Գրոսհեյսի - *Puccinellia grossheimiana* V.I.Krecz.

Ինչպես արդեն նշվել է, նախատեսվող գործունեության վայրը գտնվում է Սևան համայնքի Չկալովկա և Նորաշեն բնակավայրերի «Սևան» ազգային պարկի և դրան հարող տարածքներում, ավամերձ հատվածում:

Նախատեսվող գործունեության տարածքի ուսումնասիրության ընթացքում հազվագյուտ, Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ չեն հանդիպել:

Նախատեսվող գործունեության տարածքի բուսականությամբ ծածկված շերտը հիմնականում ներկայանում է հետևյալ բուսատեսակների համակեցությամբ.

Stipa tirsia Stev., *Agropyron*, *Bothriochloa ischaemum* (L.) Keng, *Festuca versicolor* Tausch, *Festuca valesiaca* Gaudin., *Echinops sphaerocephalus*, *Artemisia absinthium* L., *Phleum pratense* L., *Hordeum violaceum* Boiss. et Huet, *Trifolium ambiguum* L, *Achillea*, *Astragalus*, *Plantago*, *Koeleria cristata* (L.) Pers., *Koeleria albovii* Domin:

Այս բուսատեսակները ավելի հաճախ հանդիպում են Սևան-Գավառ ա/ճ աջ կողմում ընկած տարածքում, որը ներկայանում է համեմատաբար հարուստ խոտածածկով, իսկ Սևան-Գավառ ա/ճ ձախ կողմում բուսածածկը համեմատաբար նոսր է, բացառություն են կազմում նախատեսվող կաթսայատան, էլեկտրատեղակայանի և ավտոկայանատեղիի տարածքները և դրանց հետնամասում գտնվող բլուրները: Այս բլուրների վրա և նախատեսվող հյուրանոցային համալիրի ու կոնֆերանս կենտրոնի միջակայքի լճափին մոտ ընկած հատվածներում առկա են նաև մասուրի թփեր:

Կոնֆերանս կենտրոնի տեղամասը ներկայանում է հիմնականում բուսական ծածկույթից զուրկ տեսքով, ժայռային, ժայռաբեկորային և ավազային մակերեսներով:

Հյուրանոցային համալիրի տեղամասի Սևան-Գավառ ա/ճ-ին մոտ ընկած հատվածում նկատվում է վերը նշված բույսերից կազմված խոտածածկ, իսկ դեպի լիճ տարածվող հատվածը ներկայանում է հիմնականում բուսածածկույթից զուրկ ավազներով, խճով և ժայռային մակերեսներով:

Լճափից 3-4մ. հեռավորության վրա, լողափի տարածքում առկա են թվով 4 բարդիներ, որոնք հավանաբար տնկվել են 20-30 տարի առաջ՝ տեղի բնակիչների կողմից: Նախատեսվում է այդ ծառերը հնարավորինս պահպանել, սակայն ջրի մակարդակի բարձրացման հետևանքով դրանք կարող են հայտնվել ջրածածկ լինող տարածքում և այդ պատճառով հնարավոր է, որ կարիք առաջանա ծառերը արմատներով հանդերձ հեռացնելու և հնարավորության դեպքում տեղափոխելու մոտակա այլ վայր՝ նախապես համաձայնեցնելով «Սևան» ԱՊ-ի հետ:

Հողային աշխատանքների ընթացքում առաջացած ողջ բուսահողը տեղափոխվելու է Սևան-Գավառ ա/ճ աջ կողմում գտնվող, ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող հողատարածք՝ ժամանակավոր պահուստի նպատակով՝ պահպանելով գրունտի հետ չխառնվելու և չաղտոտվելու անհրաժեշտ պայմանները, այնուհետև այն օգտագործվելու է տարածքի բարեկարգման համար:

Կենդանական աշխարհ

Տարածաշրջանի այս հատվածը ներկայացված է բավականին լայն տարածված հարուստ կենսաբազմազանությամբ, ինչպես նաև մի քանի կարմիրգրքային տեսակներով: Կենդանիների կարմիրգրքային տեսակները տարածված են հիմնականում պահպանված չխախտված բնական տարածքներում և չինգիլների մոտ: Տարածաշրջանում ամենատարածված և բազմաքանակ կենդանիներն են մկնանման կրծողները և մանր թռչնատեսակներ, որոնք հանդիսանում են գիշատիչ թռչունների և կենդանիների, այդ թվում կարմիրգրքային կենդանատեսակներից որոշների համար որպես կերային օբյեկտներ: Տարածաշրջանում հանդիպող կենդանատեսակները ներկայացված են ստորև աղյուսակում: Աղյուսակում ընդգրկված կենդանիների որոշ տեսակները ներկայացված են նկարում:

Տարածաշրջանում հանդիպող կենդանատեսակները

№	Կենդանու հայերեն անվանումը	Կենդանու լատիներեն անվանումը
1	Թխակապույտ աղավնի	Columba livia
2	Ժուլան	Lanius collurio
3	Լոր	Coturnix coturnix
4	Խայտաբղետ քարակեռեխ	Monticola saxatilis
5	Հոպոպ	Upupa epops
6	Մեծ ճուռակ	Buteo buteo
7	Մոխրագույն ագռավ	Corvus corone
8	Մոխրագույն արտույտ	Calandrella rufescens
9	Մոխրագույն կաքավ	Perdix perdix
10	Ոսկեգույն մեղվակեր	Merops apiaster
11	Պարող քարաթռչնակ	Oenanthe isabellina
12	Ջրածիծառների տեսակներ	Chlidonias
13	Սև կեռեխ	Turdus merula
14	Սևաճակատ շամփրուկ	Lanius minor
15	Սևավիզ քարաթռչնակ	Oenanthe finschii
16	Սովորական կաչաղակ	Pica pica
17	Սովորական հողմավար բազե	Falco tinnunculus
18	Սովորական ճայ	Corvus monedula
19	Սովորական որոր	Larus ridibundus
20	Սովորական սարյակ	Sturnus vulgaris
21	Սովորական սիտեղ	Sitta europaea
22	Սովորական քարաթռչնակ	Oenanthe oenanthe
23	Տափաստանային արտույտ	Melanocorypha calandra
24	Փուփուլավոր արտույտ	Galerida cristata
25	Աղվես	Vulpes vulpes
26	Աքիս	Mustela nivalis
27	Գորշուկ/ Փորսուղ	Meles meles
28	Դաշտամկներ	Microtinae
29	Համստեր	Cricetus cricetus
30	Ձյան դաշտամուկ	Chionomys nivalis
31	Նապաստակ	Lepus europaeus
32	Գայլ	Canis lupus
33	Շնագայլ	Canis aureus
34	Քարակզաքիս	Martes foina

Տարածաշրջանում հանդիպող կենդանաբուսականները



Լոր - Coturnix coturnix



Միսրազույն ագռավ - Corvus corone



Թխակապույտ աղավախ - Columba livia



Սովորական հողմավար բազե - Falco tinnunculus



Հոպուպ - Upupa epops



Սովորական սիսեռ - Sitta europaea



Աքիս - *Mustela nivalis*



Դաշտամկներ - *Microtinae*



Նապաստակ - *Lepus europaeus*



Համստեր - *Cricetus cricetus*

Տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ կարմիր գրքում և ԲՊՄՄ Կարմիր ցուցակում գրանցված 5 կենդանատեսակների ցուցակը բերված է ստորև Աղյուսակ 12-ում, իսկ դրանցից որոշների լուսանկարները՝ Նկար 11-ում:

Աղյուսակ 12 Նախադասվող գործունեության տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված կենդանատեսակները

№	Կենդանատեսակ		ԲՊՄՄ-ի Կարմիր ցուցակում ունեցած կատեգորիան ⁶
	Հայերեն	Լատիներեն	
1	Հարթ խխունջ	<i>Gyraulus laevis</i>	EN
2	Մոխրաայտ սուզակ	<i>Podiceps grisegena</i> Boddaert	VU
3	Թշնան կարապ	<i>Cygnus olo</i>	VU
4	Մոխրագույն սագ	<i>Anser anser</i>	VU
5	Խայտաբաղ	<i>Tadorna tadorna</i>	VU
6	Լայնակտուց բաղ	<i>Anas clypeata</i> Linneus	VU
7	Սպիտակաճակատ սագ	<i>Anser albifrons</i>	VU

№	Կենդանատեսակ		ԲՊՄՄ-ի Կարմիր ցուցակում ունեցած կատեգորիան ⁶
	Հայերեն	Լատիներեն	
8	Կարմիր ցին	Milvus milvus	EN
9	Սպիտակապոչ արծիվ	Haliaeetus albicilla Linnaeus	EN
10	Գիշանգղ	Neophron percnopterus Linnaeus	EN
11	Տափաստանային արծիվ	Aquila nipalensis orientalis Hodgson	VU
12	Աղավնաբազե	Falco columbarius Linnaeus	DD
13	Սապաս	Falco peregrinus Tunstall	VU
14	Հայկական որոր	Larus armenicus Buturlin	VU
15	Ներկարար	Coracias garrulus	VU

EN (Endangered) - վտանգված տեսակ

VU (Vulnerable) - խոցելի տեսակ

Նկար 11. Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված կենդանատեսակների լուսանկարները



Տափաստանային արծիվ - *Aquila nipalensis*



Ներկարար - *Coracias garrulus*



Հայկական որոր - *Larus armenicus*



Մոխրաայտ սուզակ - *Podiceps grisegena* Boddaert



Լայնակտուց բաղ - *Anas clypeata* Linneus



Չարթ խխունջ - *Gyraulus laevis*

Ինչպես արդեն նշվել է, նախատեսվող գործունեության վայրը գտնվում է «Սևան» ազգային պարկի տարածքում՝ ափամերձ հատվածում: Այս հատվածը գտնվում է մարդածին ազդեցության ներքո և կիրառվում է որպես հանգստյան գոտի: Նախատեսվող գործունեության տարածք կարճաժամկետ այցելության և ուսումնասիրության ընթացքում բացի Հայկական որորից Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակներ չեն հանդիպել: Հայկական որորի բնադրավայրը գործունեության տարածքից գտնվում է մոտ 1.5 կմ. հեռավորության վրա և այն այստեղ հանդիպում է այնպես, ինչպես Սևանա լճի ողջ տարածքում:

2.9 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի սոցիալ-տնտեսական վիճակը

Սևան համայնք

1935թվականին այն վերանվանվեց Սևան: 1961 թվականին բնակավայրին շնորհվեց շրջանային ենթակայության քաղաքի կարգավիճակ /մեկ ավանով և 10 գյուղով/, իսկ 1967թվականին՝ հանրապետական ենթակայության: Հայաստանի վարչատարածքային նոր բաժանմամբ Սևանը, որպես ինքնուրույն համայնք, ներառում է Սևան քաղաքը, Յամաքաբերդ, Գոմածոր թաղամասերը, Գագարին գյուղը:

Համայնքի վարչական տարածքը՝ 1764.68հա ,

Բնակչությունը՝ 26004 կամ 25919 մարդ:

Հեռավորությունը մարզկենտրոն Գավառից՝ 37 կմ, հեռավորությունը մայրաքաղաք Երևանից՝ 60 կմ, Բարձրությունը ծովի մակարդակից՝ 1925 մ:

Սևան համայնքը գտնվում է Սևանա լճի Հյուսիս-Արևմտյան ափին՝ ծովի մակերևույթից 1925 մետր բարձրության վրա, լճից 200-250մ հեռավորության վրա:

Սևան քաղաքային համայնքը հարակից է Վարսեր, Ծովագյուղ, Լճաշեն համայնքներին (հեռավորություն նախատեսվող գործունեության վայրից՝ 4 կմ:

Իր աշխարհագրական դիրքով Սևանը Հայաստանի ամենալեռնոտ շրջաններից է. գտնվում է Արեգունի, Փամբակի և Գեղամա լեռնաշղթաների հանգուցակետում:

Համայնքն իր ափամերձ տարածքներով զբոսաշրջությամբ, հանգստի, առողջարանային հիանալի բնակավայր է: Այն առաձնանում է ջրային ռեսուրսներով, բնապահպանական և մշակութային հուշարձաններով: Ներկայումս սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթություններից է փոքր և միջին բիզնեսի, զբոսաշրջության գործի զարգացումը, որոնց ուղղությամբ իրականացվում են ծրագրեր՝ ներգրավելով տեղական և միջոցային կազմակերպությունների ներուժը: Համայնքում զարգացած է ծառայությունների մատուցման ոլորտը, գործում են կրթական, առողջապահական, մշակութային հաստատություններ, սպասարկող կազմակերպություններ և ընկերություններ, բանկային մասնաճյուղեր, կապի օպերատորների մասնաճյուղերի գրասենյակներ: Համայնքի բնակարանային տնտեսության պահպանումն իրականացվում է գործող 7 համատիրությունների միջոցով, որոնք ընդգրկում են 213 բազմաբնակարան շենք: Համայնքային ոչ առևտրային 11 կազմակերպությունների՝ 5 մանկապարտեզների, Հովհ. Այվազովսկու անվան արվեստի, Վ. Սարգսյանի անվան երաժշտական դպրոցների, Ն. Դազարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցի, Վ. Ստեփանյանի անվան Գրադարանների կենտրոնացված համակարգի, Ս. Զաքարյանի անվան համայնքային մշակութային կենտրոնի գործունեության շնորհիվ նախադպրոցական կրթության իրականացումը, մարզամշակութային առօրյան, երեխաների արտադպրոցական աշխատանքների կազմակերպումն իրականացվում է համակարգված և նպատակային: Համայնքում գործում է 3 նախակրթարան՝ «Սևանի թիվ 1 «Բողբոջե մուր-մանկապարտեզե ՀՈԱԿ-ի, Սևանի թիվ 5 և Սևանի թիվ 6 միջնակարգ դպրոցների հենքի վրա: Համայնքային մշակութային կյանքի ռիթմն ապահովում են «Սևանե, «Հայրորդիքե, «Նազանիե ժողովրդական պարերի համույթները, տիկնիկային թատրոնը, Հ. Իգիթյանի անվան գեղագիտական դաստիարակության Սևանի մասնաճյուղը: Համայնքում գործում է 4 հիմնական, 3 միջնակարգ և 1 ավագ դպրոց, արհեստագործական ուսումնարան, քոլեջ, ֆրանկոֆոն ակումբ, Ջրային մարզաձևերի մարզադպրոց: Սևանում է գտնվում «Սևան զազային պարկե ՊՈԱԿ-ը, որի բնագիտական թանգարանն էլ Սևանա լճի, տարածաշրջանի կենդանական և բուսական աշխարհի, ժողովրդագրության, ավանդույթների ամբողջական ցուցանմուշների և ցուցադրությունների եզակի վայր է:

Համայնքում գործում է «Սևանի ԲԿե ՓԲԸ-ն, որը սպասարկում է Սևան և հարակից համայնքների բնակչության բժշկական պահանջները:

2.10 Պատմամշակութային և բնության հուշարձանները

Գեղարքունիքի մարզի բնակավայրերը հարուստ են պատմամշակութային ժառանգությամբ, որը խթան է հանդիսանում այդ մարզում զբոսաշրջության և ռեկրեացիոն գործառույթներն առավել զարգացնելու համար: Հանրապետության տարածքում գտնվող հուշարձաններն ըստ արժեքավորման չափանիշների դասակարգվում են հանրապետական և տեղական նշանակության: Սևան համայնքում առկա են բազմաթիվ հուշարձաններ:

ՀՀ Կառավարության 2003թ. հունվարի 9-ին թիվ 80-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակի համաձայն, Սևան համայնքի տարածքում կան թվով 4 պատմամշակութային հուշարձաններ, որոնք ներկայացված են ստորև՝

Թվարկված պատմամշակութային հուշարձաններից ոչ մեկը չի գտնվող նախատեսվող գործունեության տարածքում:

Աղյուսակ 1 Սևան համայնքի պատմամշակութային հուշարձանները

Սևան քաղաք

N	Հուշարձանախումբը, հուշարձանը	Ժամանակը	Տեղը բնակավայրի նկատմամբ, հասցեն	Նշանակությունը հանրապետական, տեղական	Ծանոթագրություն	Հուշարձանի համարը	Հուշարձանի ենթահամարը (ենթահամարը)
1.			ԱՄՐՈՑ ՄԵԾԵՓ	մթա 3-1հզմ	0,6 կմ հս-ամ	Հ	Գոմաձոր թաղամաս, Մեծեփի գագաթին, քաղաքի հեռուստաաշտա-րակի մոտ
2.			ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	9-20-րդ դդ.	հվ-աե մասում	Տ	Ցամաքաբերդ թաղամասի եզրին, երկաթգծից ձախ
			խաչքար	9-10-րդ դդ.		Հ	ընկած գետնին, ստորին մասը չի պահպանվել
			խաչքար	11-րդ դ.		Հ	ընկած գետնին
			խաչքար	12-13-րդ դդ.		Հ	ընկած գետնին, եզրերը վնասված, վերին ձախ մասը չի պահպանվել
			խաչքար	12-13-րդ դդ.		Հ	երկատված, կանգնեցված գետնին
			խաչքար	14-15-րդ դդ.		Հ	ընկած գետնին, եզրերը ջարդված
			խաչքար	14-15-րդ դդ.		Հ	ընկած գետնին, վերնամասը՝ չի պահպանվել

		տապանաքար՝ լիմեցի Կարապետ վարդապետի	16-17-րդ դդ.		S	
		տապանաքար՝ Թումանի	1701 թ.		S	
		տապանաքար՝ Խաչատուրի	1708 թ.		S	
		տապանաքար՝ Մասունի	1731 թ.		S	
3.		ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	9-20-րդ դդ.	հս-ամ մասում	S	Գոմաձոր թաղամասի հս եզրին, գործող գերեզմանոցի հվ մասում
4.		ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	մթա 2-1 հզմ	հս եզրին	Հ	Յամաքաբերդ թաղամասում, «Սևանե հյուրանոցից 300մ աե
5.		ԵԿԵՂԵՑԻ	9-10-րդ դդ.	0,1 կմ հս	S	Գոմաձոր թաղամաս, միջնադարյան գերեզմանոցի տարածքում, ավերված
		գերեզմանոց	10-17-րդ դդ.		S	եկեղեցուց աե
	5.1.1	խաչքար	12-րդ դ.		Հ	խրված հողի մեջ
	5.1.2	խաչքար՝ Սարգսի	12-13-րդ դդ.		Հ	ընկած գետնին, երկատված
	5.1.3	խաչքար	12-13-րդ դդ.		Հ	կիսով խրված հողի մեջ
	5.1.4	խաչքար	12-13-րդ դդ.		Հ	խրված հողի մեջ
	5.1.5	խաչքար	12-13-րդ դդ.		Հ	ընկած գետնին, երկատված
	5.1.6	խաչքար	12-13-րդ դդ.		Հ	ընկած գետնին, երկատված
	5.1.7	խաչքար	13-րդ դ.		Հ	խրված հողի մեջ
	5.1.8	խաչքար	13-րդ դ.		Հ	ընկած գետնին, եզրերը վնասված
	5.1.9	խաչքար	14-15-րդ դդ.		Հ	ընկած գետնին
6.		ԵԿԵՂԵՑԻ	1924 թ.	հս-ամ մասում	S	Գոմաձոր թաղամասի եզրին, Մեծեկի սարի լանջին
7.		ԵԿԵՂԵՑԻ Ս. ԳԵՎՈՐԳ	19-րդ դ.	հս-աե մասում	S	Յամաքաբերդ թաղամասի կենտ.-ում
		խաչքար	11-րդ դ.		Հ	ագուցված աե պատին, արտաքուստ
		խաչքար	12-13-րդ դդ.		Հ	հվ ավանդատանը, ձախ եզրը ջարդված
		գերեզմանոց	11-19-րդ դդ.		S	եկեղեցուց հվ
	7.3.1	խաչքար	12-րդ դ.		Հ	ընկած գետնին
	7.3.2	խաչքար	14-15-րդ դդ.		Հ	խրված հողի մեջ
	7.3.3	խաչքար	14-15-րդ դդ.		Հ	պատվանդանին
8.		խաչքար	9-10-րդ դդ.	հս-աե մասում	Հ	Յամաքաբերդ թաղամաս, «Սևանե

							հանգստյան տան տարածքում, պատվանդանին, վերին և ստորին ձախ անկյունները կոտրված
9.		խաչքար	11-12-րդ դդ.	հս-աե մասում	Հ		Յամաքաբերդ թաղամաս, հյուրանոց տանող ճանապարհից աջ, նորաշեն սրբատեղիի բեմին
10		խաչքար	11-12-րդ դդ.	հս-աե մասում	Հ		Յամաքաբերդ թաղամաս, հյուրանոց տանող ճանապարհից աջ, նորաշեն սրբատեղիի բեմին
11.		խաչքար	11-12-րդ դդ.	հս-աե մասում	Հ		Յամաքաբերդ թաղամաս, հյուրանոց տանող ճանապարհից աջ, նորաշեն սրբատեղիի բեմին
12.		խաչքար	11-12-րդ դդ.	հս-աե մասում	Հ		Յամաքաբերդ թաղամաս, հյուրանոց տանող ճանապարհից աջ, նորաշեն սրբատեղիի բեմին
13.		խաչքար	11-12-րդ դդ.	հս-աե մասում	Հ		Յամաքաբերդ թաղամաս, հյուրանոց տանող ճանապարհից աջ, նորաշեն սրբատեղիի բեմին
14.		ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ՋՈՀՎԱԾՆԵՐԻՆ	1980 թ.	ք. մ.	Տ		Գոմաձոր թաղամաս ճարտ.՝ Ս. Մանվելյան
15.		ՄԱՏՈՒՌ ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ	16-րդ դ.	ամ մասում	Տ		Գոմաձոր թաղամաս, Մեծեփ սարի աե լանջին
		խաչքար	12-րդ դ.		Հ		ագուցված աե պատին, ներքուստ
		խաչքար	12-13-րդ դդ.		Հ		ագուցված ամ պատին, ներքուստ
		խաչքար	12-13-րդ դդ.		Հ		ներսում, երկատված
		խաչքար	12-13-րդ դդ.		Հ		ընկած գետնին
		խաչքար	14-15-րդ դդ.		Հ		կանգնեցված ներսում
16.		ՄԱՏՈՒՌ ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ	16-17-րդ դդ.	հս մասում	Տ		Յամաքաբերդ թաղամաս
17.		ՌԵՍՏՈՐԱՆԻ ՇԵՆՔ. «ԾՈՎԻՆԱՐԵ ՌԵՍՏՈՐԱՆԸ	1963 թ.	Սևանի ափին	Տ		ճարտ.՝ Ռ. Իսրայելյան

18.		ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ. ՄԵՎԱՆԻ ՎԱՆՔԸ	9-20-րդ դդ.	հս-աե մասում	Հ	թերակղզում
		Եկեղեցի ս. Առաքելոց	874 թ.		Հ	
18.1.1.		խաչքար	10-րդ դ.		Հ	հենած բեմին, 3 խաչքարերից ձախից 1-ինը
18.1.2.		խաչքար՝ Ղազարի	13-րդ դ.		Հ	հենած հս պատին
18.1.3.		խաչքար	14-15-րդ դդ.		Հ	հենած հվ պատին, ներքուստ
18.1.4.		խաչքար՝ Ներսեսի	1425 թ.		Հ	հենած հվ պատին, ներքուստ, վերնամասը՝ չի պահպանվել
18.1.5.		խաչքար	1510 թ.		Հ	հենած խորանի հս պատին, վերին և ստորին աջ անկյունները՝ կոտրված, թվակիր
18.1.6.		խաչքար	16-րդ դ.		Հ	կանգնեցված հվ պատի մոտ, ներքուստ, վերնամասը՝ չի պահպանվել
18.1.7.		խաչքար	16-րդ դ.		Հ	բեմին, արձանագիր
18.1.8.		խաչքար՝ Հայրապետի և Հրեպկայի («Խաչելություն»)	1653 թ.		Հ	խորանում, պատվանդանին կազմող՝ Տրդատ բերվել է 19-րդ դ. կեսին՝ Նորաշեն գյուղից
18.1.9.		տապանաքար	1875 թ.		Հ	ներսում, բերված Բջնիից
		Եկեղեցի ս. Աստվածածին	874 թ.		Հ	
18.2.1.		գավիթ	1653 թ.		Հ	
	18.2.1.1.	խաչքար	9-10-րդ դդ.		Հ	
	18.2.1.2.	խաչքար	9-10-րդ դդ.		Հ	
	18.2.1.3.	խաչքար	10-11-րդ դդ.		Հ	հենած հս պատին, ներքուստ, եզրերը ջարդոտված
	18.2.1.4.	խաչքար	11-րդ դ.		Հ	հենած հս պատին, վերնամասը՝ չի պահպանվել
	18.2.1.5.	խաչքար	11-12-րդ դդ.		Հ	պահպանվել է միջին մասը
	18.2.1.6.	խաչքար	11-12-րդ դդ.		Հ	տեղադրված ամ պատին, ստորին ձախ և վերին աջ անկյունները՝ ոտրված

	18.2.1.7.	խաչքար	12-րդ դ.		Հ	վերնամասը՝ չի պահպանվել
	18.2.1.8.	խաչքար՝ «Թևակոր խաչե	12-րդ դ.		Հ	հենած հվ պատին, արտաքուստ, վերին խաչաթևը չի պահպանվել, արձանագիր Խաչքարը Մրան է բերվել Դղմաշեն գյուղից
	18.2.1.9.	խաչքար	12-13-րդ դդ.		Հ	ստորին մասը չի պահպանվել
	18.2.1.10.	խաչքար	12-13-րդ դդ.		Հ	եզրագոտին ջարդոտված
	18.2.1.11.	խաչքար	12-13-րդ դդ.		Հ	վերնամասը՝ չի պահպանվել
	18.2.1.12.	խաչքար	12-13-րդ դդ.		Հ	հենած եկեղեցու ամ պատին, արտաքուստ, մուտքից ձախ
	18.2.1.13.	խաչքար	13-րդ դ.		Հ	աջ եզրը կոտրված
	18.2.1.14.	խաչքար	13-րդ դ.		Հ	բեկոր
	18.2.1.15.	խաչքար	15-րդ դ.		Հ	
	18.2.1.16.	խաչքար	15-16-րդ դդ.		Հ	հենած ամ պատին, արտաքուստ
	18.2.1.17.	խաչքար	15-16-րդ դդ.		Հ	
	18.2.1.18.	խաչքար	15-16-րդ դդ.		Հ	ներսում
	18.2.1.19.	խաչքար	15-16-րդ դդ.		Հ	տեղադրված հվ պատին, ներքուստ, վերնամասը՝ չի պահպանվել
	18.2.1.20.	խաչքար	15-16-րդ դդ.		Հ	հենած հս պատին, ներքուստ
	18.2.1.21.	խաչքար	15-16-րդ դդ.		Հ	հենած հվ պատին, ներքուստ
	18.2.1.22.	խաչքար՝ Խաթունի	15-16-րդ դդ.		Հ	հենած հս պատին
	18.2.1.23.	խաչքար	15-16-րդ դդ.		Հ	տողադրված հվ պատին, ներքուստ
	18.2.1.24.	խաչքար	1551 թ.		Հ	հենած հս պատին, բեկոր
	18.2.1.25.	խաչքար	16-րդ դ.		Հ	հենած ամ պատին, արտաքուստ, մուտքից աջ
	18.2.1.26.	խաչքար	16-րդ դ.		Հ	վերնամասը՝ չի պահպանվել
	18.2.1.27.	խաչքար	16-րդ դ.		Հ	հենած հս պատին, եզրերը ջարդոտված

	18.2.1.28.	խաչքար	16-րդ դ.	Հ	արձանագիր, ստորին եզրը չի պահպանվել
	18.2.1.29.	խաչքար	16-17-րդ դդ.	Հ	հենած հս պատին, ստորին և վերին եզրերը կոտրված
	18.2.1.30.	խաչքար	16-17-րդ դդ.	Հ	հենած հս պատին, ներքուստ
	18.2.1.31.	խաչքար	16-17-րդ դդ.	Հ	աջակողմյան մասը չի պահպանվել
	18.2.1.32.	խաչքար	16-17-րդ դդ.	Հ	տեղադրված հվ պատին, վերնամասը՝ չի պահպանվել
	18.2.1.33.	խաչքար	16-17-րդ դդ.	Հ	վերնամասը՝ չի պահպանվել
	18.2.1.34.	խաչքար	16-17-րդ դդ.	Հ	պահպանվել է միջնամասը
	18.2.1.35.	խաչքար	16-17-րդ դդ.	Հ	արձանագիր, ստորին մասը չի պահպանվել
	18.2.1.36.	խաչքար	1615 թ.	Հ	հվ-ամ ամկյան մոտ, վերին աջ անկյունը կոտրված
	18.2.1.37.	տապանաքար	15-16-րդ դդ.	Տ	հվ պատի մոտ, եզրերը ջարդոտված
		Եկեղեցի ս. Հարություն	305 թ, 9-րդ դ.	Հ	ավերված
		Ճեմարանի շենք	9-րդ դ.	Հ	վրկնգ.՝ 1834-1835 թթ., 1907թ.
		գերեզմանոց	9-16-րդ դդ.	Հ	Եկեղեցիների շուրջը
18.5.1.		խաչքար	9-10-րդ դդ.	Հ	ս. Աստվածածին Եկեղեցուց 10 մ աե, կանգնեցված գետնին, ձախ եզրագոտին ջարդված
18.5.2.		խաչքար	9-10-րդ դդ.	Հ	ս. Աստվածածին Եկեղեցուց 15 մ հս, պատվանդանին
18.5.3.		խաչքար	12-13-րդ դդ.	Հ	ս. Աստվածածին Եկեղեցուց 100 մ ամ, դեպի վանք տանող աստիճաններից աջ, 4 խաչքարերից ձախից 1-ինը
18.5.4.		խաչքար	1212 թ.	Հ	ս. Աստվածածին Եկեղեցուց 100 մ ամ, դեպի վանք տանող աստիճանների սկզբնամասում

18.5.5.		խաչքար՝ Աբիհասանի	1227 թ.		Հ	ա. Աստվածածին եկեղեցուց 100 մ աե, վերնամասը՝ կոտրված
18.5.6.		խաչքար	1462 թ.		Հ	ա. Աստվածածին եկեղեցուց 100 մ աւ, դեպի վանք տանող աստիճանների սկզբնամասում, թվակիր
18.5.7.		խաչքար՝ Պոռշի	15-16-րդ դդ.		Հ	ա. Աստվածածին եկեղեցուց 100 մ աւ, դեպի վանք տանող աստիճանների սկզբնամասում
18.5.8.		խաչքար	15-16-րդ դդ.		Հ	ա. Աստվածածին եկեղեցուց 100 մ աւ, դեպի վանք տանող աստիճանների սկզբնամասում, երկատված
18.5.9.		խաչքար՝ Սուլթանի	15-16-րդ դդ.		Հ	ա. Աստվածածին եկեղեցուց 15 մ հւ, պատվանդանին կանգնած 4 խաչքարերից ձախից 1-ինը
18.5.10.		խաչքար	15-16-րդ դդ.		Հ	ա. Աստվածածին եկեղեցուց 100 մ աե, երկատված, ընկած գետնին
18.5.11.		խաչքար	1557 թ.		Հ	ա. Աստվածածին եկեղեցուց 15 մ հւ, պատվանդանին կանգնած զույգ խաչքարերից աջակողմյանը
18.5.12.		տապանաքար	15-16-րդ դդ.		Տ	ա. Աստվածածին եկեղեցուց 15 մ հւ

Թվարկված պատմամշակութային հուշարձաններից ոչ մեկը չի գտնվող նախատեսվող գործունեության տարածքում:

ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի թիվ 967-Ն որոշմամբ հաստատված՝ ՀՀ բնության հուշարձանների ցանկի համաձայն, Սևան համայնքում բնության հուշարձաններ չկան:

Աղյուսակ Գեղարքունիքի մարզի բնության հուշարձանները

NN	Անվանումը (նկարագիրը)	Տեղադիրքը
1.	«Սևկատարե հրաբուխ	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքից 20 կմ արլ
2.	«Աժդահակե հրաբուխ	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքից 25 կմ հվ-արմ
3.	«Անանունե ծալքավորում	Գեղարքունիքի մարզ, Սևանա լճի հս-արլափին, երկաթուղու պաստառի հատվածում, Սևան քաղաքի մոտ 45 կմ հեռավորության վրա
4.	«Քարե ծով» քարացրոններ (չինգիլներ)	Գեղարքունիքի մարզ, Լճաշեն գյուղից 1 կմ հեռավորության վրա
5.	«Անանունե հրաբխային արտահայտված շերտավորություն	Գեղարքունիքի մարզ, Լճաշեն գյուղից 1 կմ հվ, հրաբխային խարամների գործող քարհանքի մոտ
6.	«Արմաղանե հրաբուխ	Գեղարքունիքի մարզ, Մադինա գյուղից 3.5 կմ արմ
7.	«Հայրավանքե բրածո ֆաունա	Գեղարքունիքի մարզ, Հայրավանք գյուղից 2-3 կմ հս-արլ
8.	«Սարանցե աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքի Հացառատ թաղամասում, ծ.մ-ից 1937 մ բարձրության վրա
9.	«Խաչերիե աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքի արմ ծայրամասում
10.	«Արցունք քարե աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Ակունք գյուղի տարածքում, ծ.մ-ից 1980 մ բարձրության վրա
11.	«Անանունե աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Լճավան գյուղի տարածքում, ծ.մ-ից 2045 մ բարձրության վրա
12.	«Անանունե աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Կարճաղբյուր գյուղի հվ-արլ եզրին, ծ.մ-ից 1930 մ բարձրության վրա
13.	«Վանքի աղբյուրե աղբյուրներիխումբ	Գեղարքունիքի մարզ, Սարուխան գյուղի հվ ծայրամասում, ծ.մ-ից 1977 մ բարձրության վրա
14.	«Ակնատ լիճ	Գեղարքունիքի մարզ, Ծաղկաշեն գյուղից 10 կմ արմ, Ակնասար լեռան լանջին
15.	«Ենթալպյան մարգագետինե	Գեղարքունիքի մարզ, Դրախտիկ գյուղի մոտ
16.	«Թառ /Կարմիր կատար/ե	Գեղարքունիքի մարզ, Գավառ համայնքում, Աժդահակ հրաբխից հարավ արևմուտք, 3440 մ ծ.մ-ից

Սևան քաղաքում է գտնվում Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցին: Եկեղեցու շինարարական աշխատանքներն սկսվել են 2009 թվականին և ավարտվել 2015 թվականին: Այն կառուցվել է ֆրանսիաբնակ ազգային բարերար Սարգիս Պետոյանի բարերարությամբ՝ ի հիշատակ նրա ծնողների՝ Ավետիս և Թագուհի Պետոյանների:

Սևան քաղաքում է գտնվում նաև Մեծ Եղեռնի զոհերի հիշատակի խաչքարը, Սևանի քաղաքային Պանթեոնը, Հայրենական Մեծ պատերազմի և Արցախյան պատերազմի զոհերի հուշահամալիրը:

Սևանա կղզին (այժմ՝ թերակղզի) դեռևս անհիշելի ժամանակներից սրբատեղի է եղել: Հեթանոսական ժամանակներում այստեղ բազին եղել, որը կործանել և նրա տեղում Սբ Հարություն եկեղեցին է հիմնադրել Սբ Գրիգոր Լուսավորիչը: Պատմական աղբյուրները և վաղ քրիստոնեական ավանդությունը վկայում են, որ նա հայոց Տրդատ Գ Մեծ արքայի պատվին կառուցել է տալիս նաև Սբ Հովհաննես Կարապետ մատուռը (հայտնի է, որ Տրդատ արքան մկրտվելուց հետո ստանում է Հովհաննես անունը): Հետագայում այդ մատուռի հիման վրա կառուցվել է Սբ Հովհաննես Կարապետ եկեղեցին, որը կանգուն է մինչև օրս:

Սևանա թերակղզու հոգևոր կյանքի վերածնունդը 9-րդ դարն է: Այս վերածնունդը կախվում է Աշոտ Առաջին Բագրատունու դուստր, Սյունյաց Վասակ Գաբուն իշխանի այրի և Մարիամի և Մաշտոց վարդապետ Եղիվարդեցու, որի ջանքերով ստեղծվում է վանական միաբանություն, անունների հետ:

Մանվել վարդապետ Կյումուշխանցու բնորոշմամբ՝ Սևանա վանքը դառնում է «առաջնորդարան և ուսումնասեր անձանց վարժարան: ԵՎ պատահական չէ, որ մենաստանը տվել է այնպիսի սաներ ինչպիսիք են Հովհաննես Դրասխանակերտցի պատմիչը, Սարգիս Սևանցին, որոնք եղել են ազգի նվիրագույն հայրապետները, Ստեփանոս Կրոնավորը, Սարգիս Իմաստասերը և այլք: Հնում Սևանա վանքի և նրա սրբությունների համբավը մեծ է եղել: Երեք անգամ Սևան ուխտի գնալը հավասար է համարվել Երուսաղեմ ուխտի գնալուն:

Բազում տարիներ անց՝ Խորհրդային իշխանության առաջին տարիներին, վանքի ունեցվածքը բռնագրավվեց ու հենց աստվածամերժության այս շրջանում քանդվեց Սբ Աստվածածին եկեղեցին: Արդեն իսկ 1990թ. Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին եպիսկոպոս Ներսիսյանի (1999թ.-ից Գարեգին Բ ամենայն հայոց կաթողիկոս) նախաձեռնությամբ և Ամենայն Հայոց կաթողիկոս Երջանկահիշատակ Վազգեն Ա օրհնությամբ վերաբացվեց Սևանավանքը:

Նույն տարում բացվեց Սևանի հոգևոր դպրանոցը: Խորհրդային հակաեկեղեցական անգութ տարիներից հետո կրոնական կյանքը վերահաստատվում Սևանա թերակղզում: 1994թ. ի պատիվ և ի հարգանս երանավետ Վազգեն Ա հայրապետի, Գարեգին Սրբազանի օրհնությամբ դպրանոցը անվանվեց Վազգենյան, որը դարձավ հայ հոգևորականության դարբնոցը: Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցի ողջ գոյության ընթացքում այն սիրով և գորովանքով խնամվել է մեծագործ բարերարների՝ ի մասնավորի Գառնիկ քին Հալաջյանի, Տեր և Տիկին Նուբար և Անիթա Ջեսուրյանների, Տեր և Տիկին Սարգիս և Սիրան Գաբրիելյանների , Տեր և Տիկին Նազար և Արտեմիս Նազարյանների, Տեր և Տիկին Սարգիս և Թագուհի Սուլթանյանների, Տեր և Տիկին Ռոբերթ և Զուլիետ Աբելյանների կողմից: Տեր և Տիկին

Գառնիկ և Անի Յակուբյանների բարերարությամբ կառուցվում է ուսանողական նոր ննջարանային մասնաշենք ինչպես և Սբ Հակոբ Մծբնա մատուռը:

2.11 Հատուկ պահպանվող տարածքներ

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է «Սևանե ԱՊ-ի սահմաններում, որը բաժանվում է 4 տարածքագործառնական գոտիների՝ արգելոցներ, արգելավայրեր, ռեկրեացիոն և տնտեսական: Պարկի տարածքում կան 4 արգելոցներ՝ «Նորաշենիե, «Լիճք-Արգիչիե, «Գիլլիե և «Արտանիշիե, ընդհանուր 7464 հա մակերեսով: Նախատեսվող գործունեության վայրը «Սևանե ԱՊ-ի տարածքագործառնական գոտիներից ամենամոտը գտնվում է «Նորաշենե-ի արգելոցից 1,5 կմ հեռավորության վրա: «Նորաշենե-ի արգելոցը գտնվում է ազգային պարկի հյուսիս-արևմտյան հատվածում, որի տարածքը կազմում է 839հա, որից ցամաքային տարածքը՝ 341հա, ջրայինը՝ 498 հա: Արգելոցի նպատակն է ապահովել թռչունների, մասնավորապես հայկական որորի /էնդեմիկ տեսակ/ բնականոն ապրելակերպն ու վերարտադրությունը: Արգելոցի տարածքը գրեթե հարթ է՝ ընկած է Սևանա լճի ափից մինչև 1908մ բարձրությունը: Արգելոցի ցամաքային հատվածը անտառազուրկ է, տեղ տեղ հանդիպում են չիխանի թփեր, իսկ կղզիները քարապատ են: Անտառային տնկարկներից հանդիպում են հիմնականում չիչխանի, թեղու և սոճու ծառուտները:

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետ. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված աշխատանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից հաստատված դրույթներով, շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

3.1 Ռիսկերի գնահատում

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- քանդման բեռնման աշխատանքների,

- գրունտային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

3.2 Արտանետումների աղբյուրները

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ քանդման և նախատեսված հարկերի կառուցման ընթացքում
- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

3.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն

3.3.1 Մթնոլորտային օդ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորում:

3.3.2 Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- ջրցանման համար կօգտագործվի միայն տեխնիկական որակի ջուր,
- տեխնիկական ջուրը կմատակարարվի լիցենզիա ունեցող կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով, որը կկնքվի շինարարության սկզբում՝ Կապալառու կազմակերպությունը,
- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարվելու է տարածքից դուրս գտնվող համապատասխան մասնագիտացված կետերում,
- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի

- վիճակում՝ բետոնախառնիչ մեքենաներով,
- ստորգետնյա կոնստրուկցիաները ջրամեկուսացնելու նպատակով օգտագործվող ջրամեկուսիչ նյութերը պետք է համապատասխանեն համապատասխան չափորոշիչներին՝ գրունտային ջրերի հետ շփման արդյունքում վտանգավոր նյութեր վերջինիս մեջ չներթափանցելու նպատակով,

Կեղտաջրերի հեռացման համար նախատեսվում է.

- շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող բիոզուգարաններից,
- շինարարական հոսքաջրերի համար կառուցվելու է ժամանակավոր սեպտիկ հոր,
- բիոզուգարանի և սեպտիկ հորի մաքրումը կատարվելու է մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով,
- շինաշխատանքների ավարտից հետո բիոզուգարանը տեղափոխվելու է Կապալառու կազմակերպության կողմից:

Շահագործման փուլ.

Շահագործման փուլում շենքերի ջրամատակարարման համակարգը միացվելու է մայրուղային ջրատարից սնվող 2x250խմ ծավալով ՕԿԶ-ներին:

Ջրահեռացման համակարգը ինքնահոս եղանակով միանալու է տարածքում տեղադրվող 270խմ կեղտաջրերի մաքրման կայանին: Արգելվելու է ֆոսֆատներ պարունակող լվացքի միջոցների կիրառումը:

3.3.3 Հողային ռեսուրսներ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շին. աշխատանքների ընթացքում իրականացնել հողերի որակի մոնիթորինգ
- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող շինարարական թափոնները կպահեստավորվեն տարածքում հատուկ նախատեսված վայրում և կծածկվեն:
- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:
- Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավազ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փոված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով (ամսեկան մեկ անգամ):
- Արգելվում է ընդհանուր օգտագործման ճանապարհներից և ջրային ուղիներից

դուրս շարժիչային և թրթուրավոր տրանսպորտային միջոցների երթևեկությունը և կանգառը ճանապարհային ցանցի սահմաններից դուրս կամ դրա համար չնախատեսված վայրերում.

- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած շինարարական թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի:

3.3.4 Թափոնների կառավարում

Շինարարության փուլում առաջանալու են կոշտ թափոններ.

- **շենքերի քանդումից առաջացած շինարարական աղբ** (ծածկագիր՝ 91200601 01 00 4)՝ մոտ 243մ³,

- գրունտի քանդում՝ 30151 մ³ ծավալով և հետ լիցք՝ 5672 մ³ ծավալով

- **կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ՝ բացառությամբ խոշոր եգրաչափերի** (ծածկագիր՝ 91200400 01 00 4) կառուցապատման փուլում՝ 12 մ³ ծավալով:

Շինարարության փուլում առաջացող շինաղբը կպահվի համապատասխան պարկերով, ծածկի տակ, մինչև տեղափոխումը համայնքի կողմից տրամադրված աղբավայր, տեղափոխումը կիրականացվի ըստ անհրաժեշտության:

Այն թափոնները, որոնք հնարավոր կլինի խառնել կենցաղային աղբի հետ (կեղտոտված լաթեր և այլն) կտեղափոխվեն աղբավայր: Իսկ մետաղական մասերի և նյութերի մնացորդները կտեղափոխվի Կապալառու կազմակերպության կողմից՝ համապատասխան կազմակերպություններին հանձնելու նպատակով: Շինարարության փուլում այլ տեսակի թափոնների կուտակում չի նախատեսվում:

Տարածքում աղբահանության նպատակով տեղադրվելու են աղբահավաք տարողություններ: Համաձայն ՀՀ Կառավարության 2008թ. դեկտեմբերի 18-ի թիվ 1563-Ն որոշման տեխնիկական բնութագրերի տարածքը անհրաժեշտ է կահավորել աղբամաններով՝ 2 աղբանոթ հաշվարկով, ինչը լիովին ապահովված է ընկերության կողմից: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր:

Շահագործման փուլ.

Մաքրման կայանի շահագործման արդյունքում առաջանում է **ակտիվ տիղմ, հանքայնացված նստվածք, մաքրող սարքավորումների ավազ**, որը համարվում է 4-րդ դասի վտանգավոր թափոն՝ դասակարգիչ՝ 94800500 04 00 4, տարեկան առաջացող ծավալը կկազմի մոտ 1-2տ, այն ևս նախատեսվում է կուտակել կայանի տարածքում գտնվող համապատասխան անջրթափանց հորում, այնուհետև սանիտարահիգիենիկ նորմերի պահպանմամբ՝ համապատասխան պարբերականությամբ, մասնագիտական լիազորված կազմակերպության միջոցով, այդ նպատակների

համար հատուկ կահավորված մեքենաներով տեղափոխել և լցնել կեղտաջրերի քաղաքային կոյուղու՝ դրա համար նախատեսված դիտահոր:

Շահագործման փուլում աղբահանությունը կիրականացվի մասնագիտացված կազմակերպության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

3.3.5 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները

Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժ.օգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
- բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժ.օգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

Ըստ նախնական գնահատման, ապահովվելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

Շահագործման փուլ.

Շահագործման փուլում արտակարգ իրավիճակների դեպքում նախատեսվում է հետևյալ միջոցառումների ապահովումը.

- Հյուրանոցի և կոնֆերանս կենտրոնի ստորգետնյա հարկերը ծառայելու են բնակչության համար որպես թաքստոց՝ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանական նպատակներով,
- ստորգետնյա հատվածում՝ թաքստոցի համար նախատեսվում է վթարային ելք,

3.3.6 Հակահրդեհային միջոցառումներ

- ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,
- բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելունպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,
- գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

Շահագործման փուլ.

- Համալիրի շենքերը և շինությունները ապահովված են լինելու ավտոմատ հրշեջ ազդանշանային, հակահրդեհային, հակաձխային, օդափոխության համակարգերով, էվակուացիոն ուղիներով և ելքերով,
- պահպանվելու են հակահրդեհային մուտքերը՝ հրշեջ մեքենաների շրջադարձի համար:

3.3.7 Աղմուկ և թրթռում

Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակներիչափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- պարբերաար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,
- բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում,

- խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը,
- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:

Շահագործման փուլ.

Շահագործման փուլում հասարակական նշանակության շենքում նախատեսվում է.

- օդափոխման և օդի լավորակման համակարգերում աղմուկի խլացուցիչների կիրառում,
- գիշերային ակումբում օգտագործվելու են ձայնամեկուսիչ, ձայնակլանիչ ու թրթռամարիչ նյութեր

3.3.8 Կենսաբազմազանություն և էկոհամակարգեր

Նախատեսվող շինարարության հարակից տարածքները բավականին ուրբանիզացված են: Տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել: Այդուամենայնիվ, շինարարական աշխատանքների ժամանակ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով նախատեսվում է.

- 1) Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով, առանձնացնել պահպանվող գոտիներ:
- 2) Ժամանակավորապես սահմանափակել առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, երե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացման ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը, տեղափոխել պահպանվող բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրել համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը գենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով: Աշխատանքները կիրականացվեն ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանող որոշման (31 հուլիսի 2014 թվականի N 781-Ն) հիմնադրույթներին համապատասխան:
- 3) Շինարարական և հողային աշխատանքներ իրականացնելու ժամանակ օգտագործվելու է ջրցան՝ փոշենստեցման նպատակով, ինչը աղտոտումից

կապահպանի օդային ավազանը և բնական էկոհամակարգերը, մասնավորապես տեղի բուսականությունը:

- 4) Որպես կանոն կենդանիները ակտիվ են վաղ առավոտյան և իրիկնամուտին, իսկ որոշ տեսակներ ակտիվ են բացառապես գիշերային ժամերին: Որոշ կենդանատեսակներ շատ զգայուն են աղմուկի նկատմամբ, ուստի կենդանիների կեսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար նախատեսվում ցանկացած աղուկ առաջացնող գործողություն իրականացնել բացառապես ցերեկային ժամերին (շինարարական աշխատանքներ, տրանսպորտի տեղաշարժ և այլն):
- 5) Կենդանիների բնականոն վարքին կարող է խանգարել նաև տարածքի գիշերային լուսավորությունը, մասնավորապես այն տեսակների, որոնք ակտիվ են գիշերը, լուսադեմին կամ մթնշաղին: Ուստի նախատեսվում մաքսիմալ նվազեցնել տարածքի լուսավորությունը:

3.3.9 Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն, մարդու առողջություն

Շինարարության փուլում աշխատողների աշխատանքի կազմակերպման և աշխատանքի անվտանգությունն ապահովելու համար ապահովվելու են հետևյալ պայմանները.

- պահպանվելու է ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,
- մինչև աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդներն անցնելու են հրահանգավորում՝ ըստ աշխատանքի անվտանգության կանոնների,
- աշխատողներն ապահովված են լինելու 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, անհատական պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ և այլն),
- շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացվելու են 2020թ. հուլիսի 2-ի ՀՀ կառավարության նիստի N87 արձանագրության պահանջներին համապատասխան, աշխատողներն ունենալու են համապատասխան բանվորական արտահագուստ,
- աշխատողների համար նախատեսվելու է սանիտարական կենցաղային պայմանների ապահովման համար պայմաններ (հանդերձարան, ցնցուղարան, զուգարան և հանգստի սենյակ՝ անհրաժեշտ կահավորանքով (լվացարան, աթոռ, սեղան և

այլն),

- շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրվելու են հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ,

- վերահսկվելու է աշխատող սարքավորումների պիտանելիությունը, մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառվելու են մեքենաների կուտակումները,

Շահագործման փուլ.

- Ապահպանվելու են Առողջապահության նախարարի 2007 թվականի փետրվարի 12-ի «Հյուրանոցային տնտեսության օբյեկտների տեղակայմանը, կառուցվածքին և շահագործմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2-III-2.1. սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» N 236-Ն հրամանի պահանջները

- Համալիրն բոլոր շենքերը, շինությունները և հասարակական տարածքները ապահովված են լինելու հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժվելու համար անհրաժեշտ պայմաններով՝ ՀՀՇՆ 1/-11.07.01-2006 շինարարական նորմերին համապատասխան:

- Համալիրի ողջ տարածքը ապահովված է լինելու արտաքին լուսավորության համակարգով

- Հյուրանոցային համալիրը և կոնֆերանս կենտրոնը ապահովված են լինելու ջեռուցման, օդափոխության, ծխահեռացման համակարգերով, տեսախցիկներով, հակահրդեհային միջոցներով՝ ազդանշանային համակարգերով, ավտոմատ համակարգերով, հիդրատներով, կրակմարիչներով և շանթարգելներով,

- աշխատողներն ու այցելուները ապահովված են լինելու 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ միջոցներով, դեղարկղիկով:

4. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հեկյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ:
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ
5. Կենսաբազմազանության մոնիթորինգ
6. Մաքրված կեղտաջրերի որակական պարբերական դիտարկումների իրականացում: Կայանի ելքից իրականացվելու են նմուշառումներ, որոնք պարբերաբար լաբորատոր փորձաքննության են հանձնվելու (շահագործման առաջին տարին՝ յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ, իսկ հաջորդ տարիներին՝ 3 ամիսը մեկ)
7. Մշտադիտարկումների միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 1000000 ՀՀ դրամ:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախազգուշացումներ և աշխատողների անվտանգություն	<p>(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ</p> <p>(b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել</p> <p>(c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա:</p> <p>(d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ)</p> <p>(e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:</p>
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	<p>(a) Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարողություններ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համարՆշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով</p> <p>(b) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով</p> <p>(c) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի:</p>
	Աղմուկ և թրթռում	<p>(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում</p>

		<p>(b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն:</p> <p>(c) Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակներին, չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում</p> <p>(d) Անհրաժեշտ է խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը,</p> <p>(e) Աղմկահարույց աշխատանքները անհրաժեշտ է հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին,</p> <p>(f) Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն ամապատասխան խլացուցիչներով:</p> <p>(g) Անհրաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող եքենաների օգտագործումը;</p>
--	--	---

	Թափոնների կառավարում	<p>(a) Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:</p> <p>(b) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր:</p> <p>(c) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից</p> <p>(d) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն</p> <p>(e) Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները բազմանվագ օգտագործել</p>
Հողային ռեսուրսներ	Հողի որակ	<p>(f) Շին. աշխատանքների ընթացքում իրականացնել հողերի որակի մոնիթորինգ</p> <p>(g) Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,</p> <p>(h) Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող շինարարական թափոնները կպահետսավորվեն տարածքում հատուկ նախատեսված վայրում և կծածկվեն:</p> <p>- Արգելվում է ընդհանուր օգտագործման ճանապարհներից և ջրային ուղիներից դուրս շարժիչային և թրթուրավոր տրանսպորտային միջոցների երթևեկությունը և կանգառը ճանապարհային ցանցի սահմաններից դուրս կամ դրա համար չնախատեսված վայրերում.</p> <p>(i) Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:</p> <p>(j) Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական</p>

		<p>տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավագ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փոխված ավագը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով (ամսեկան մեկանգամ):</p> <p>(k) աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած շինարարական թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր, տարածքը կբարեկարգվի</p>
--	--	--

Կեղտաջրերի հեռացում	Ջրի որակ Մաքրման կայան	<p>(a) Շինարարության փուլում կեղտաջրերի հեռացման համար նախատեսվում է տարածքում տեղադրել բիոզուգարաններ, Բիոզուգարանների մաքրումը և սպասարկումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կառույցների կողմից՝ պայմանագրային հիմքունքներով:</p> <p>Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն տարածքից դուրս գտնող մասնագիտացված կետերում:</p> <p>Շահագործման փուլում տեղադրվելու է 270 խմ ծավալով մաքրման կայան: Կատարվելու է մաքրված կեղտաջրերի որակական պարբերական դիտարկումների իրականացում: Կայանի ելքից իրականացվելու են նմուշառումներ, որոնք պարբերաբար լաբորատոր փորձաքննության են հանձնվելու (առաջին տարին՝ յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ և հաջորդ տարիներին՝ 3 ամիսը մեկ):</p> <p>Համալիրի տարածքում օգտագործվող լվացող միջոցները/դետերգենտները պետք է լինեն բացառապես առանց ֆոսֆատների:</p>	(b)
Հետիոտների և երթևեկության ապահովություն	Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ	<p>(a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով.</p> <ul style="list-style-type: none"> ▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ ▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և 	(b)

		հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների	
--	--	--	--

		<p>համար անվտանգ անցումներ երթևեկության զոնայում:</p> <ul style="list-style-type: none"> ▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին: ▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուղարձի համար. ▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում:
--	--	---

<p>Արտակարգ իրավիճակն եր</p>	<p>Հնարավոր վտանգներ</p>	<p>(c) Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:</p> <p>(d) Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժ.օգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:</p> <p>(e) Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:</p> <p>(f) բոլոր աշխատողներին տրվելու են անհատական և կոլեկտիվ պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցադրեն առաջին բուժ.օգնություն, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:</p>
--------------------------------------	------------------------------	---

<p>Կենսաբազմազանության մոնիթորինգը</p>	<p>Հնարավոր վտանգներ</p>	<p>1)ելակետային տվյալների ստացումը և հավաքագրումը 2)ստացված տվյալների վերլուծությունը, ամփոփումը, կանխատեսումների կազմումը. 3)տվյալների բազայի վարումը և տեղեկատվության տրամադրումը. 4)մոնիթորինգի տվյալների հիման վրա անհրաժեշտ բնապահպանական գործողությունների իրականացման վերաբերյալ որոշումների նախագծերի մշակումը՝ շահագրգիռ կողմերի մասնակցության ապահովմամբ (տարածքային կառավարման մարմիններ, համապատասխան տեղական ինքնակառավարման մարմիններ, հասարակական կազմակերպություններ, բնօգտագործողներ և այլն):</p>
--	--------------------------	---

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում 	<ul style="list-style-type: none"> - Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ 	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու

<p>Աղմուկի մակարդակի հսկում</p>	<p>- Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում</p> <p>- Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն:</p> <p>- Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակներին, չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում</p> <p>- Անհրաժեշտ է խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը,</p> <p>- Աշխատանքները անհրաժեշտ է իրականացնել օրվա ցերեկային ժամերին,</p> <p>- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:</p> <p>- Անհրաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը;</p>	<p>Շինհրապարակ</p>	<p>Գործընթացների գործունեության ստուգում, աղմուկի մակարդակի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ</p>	<p>Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում</p>	<p>Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողություն</p>
---------------------------------	---	--------------------	---	--	---

<p>Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում</p>	<p>- Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում</p> <p>- Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում</p> <p>- Շինարարական տեխնիկայի Տեխնիկական սպասարկման և</p>	<p>Շինհրապարակ</p>	<p>Գործընթացների գործունեության ստուգում</p>	<p>Մեխանիզմների շահագործման ընթացքում</p>	<p>Կապալառու Լ</p>
---	---	--------------------	--	---	------------------------

	<p>կայանման վայրերում տեղադրել ավագ կամ մանրախիճ: Վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսքի դեպքում փռված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:</p> <ul style="list-style-type: none"> - Իրականացնել հողերի որակի մոնիթորինգ 				
<p>Հողային աշխատանքներ</p>	<p>- Հանված հողային զանգվածը օգտագործվում է տարածքում անհարթությունները հարթելու համար</p>	<p>Շինհրապարակ</p>	<p>Գործընթացներիստուգում</p>	<p>Հողային աշխատանքների ընթացքում</p>	<p>Կապալառու</p>

<p>Վայրի բնություն, կենսամիջավայր, Կարմիր գրքում ընդգրկված էնդեմիկ տեսակներ</p>	<p>«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի պահանջների համապատասխան՝ բացառել բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների բնակության միջավայրի պայմանների խախտումը, ինչպես նաև անտառհատումները:</p>	<p>Շինհրապարակ և հարակից տերածքներ</p>	<p>Արտաքին զննում</p>	<p>Շինարարության ողջ ընթացքում</p>	<p>Կապալառու, Ազգային պարկի վերահսկողություն</p>
<p>Իներտ շինանյութերի գնում</p>	<p>- Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից</p>	<p>Իներտ նյութերի պահեստ</p>	<p>Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում</p>	<p>Մատակարարման ընթացքում</p>	<p>Կապալառու, մատակարար</p>
<p>Կենցաղային աղբի առաջացում</p>	<p>- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - համայնքի</p>	<p>Շինհրապարակ</p>	<p>Արտաքին զննում</p>	<p>Շինարարության ողջ ընթացքում</p>	<p>Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողություն</p>

	թույլտվություն ադրի մշտական տեղակայման վերաբերյալ				
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու
Մաքրված կեղտաջրերի որակի ստուգում	Մաքրված կեղտաջրերի որակակի պարբերական դիտարկումների իրականացում: Նմուշառումներ կայանի ելքից՝ լաբորատոր փորձաքննության հանձնելու նպատակով (շահագործման առաջին տարին՝ յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ, իսկ հաջորդ տարիներին՝ 3 ամիսը մեկ): Համալիրի տարածքում	Մաքրման կայանի ելքային խողովակ, Համալիրի ողջ տարածք	Նմուշառումներ և փորձաքննություններ	Շահագործման ողջ ընթացքում	Շահագործող կազմակերպություն

	օգտագործվող լվացող միջոցները/դետերգենտների ստուգում՝ պետք է լինեն բացառապես առանց ֆոսֆատների:				
--	---	--	--	--	--

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մթնոլորտային արտանետումների գոյքագրման ձեռնարկ, ЕМЕР/ЕЕА, 2009:
2. СН 245-71. Санитарные нормы проектирования промышленных предприятий.
3. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
4. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
5. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
6. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.
7. Укрупненные нормы водопотребления и водоотведения для различных отраслей промышленности, Стройиздат, Москва, 1982г.
8. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР, Москва 1984г.
9. ՀՀ Կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի "բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշում:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

1. ՃՀԱ
2. Տեխնիկական պայմաններ
3. Կադաստրի վկայականները և հողատարածքների հատակագծերը՝ կոորդինատներով
4. Սևան համայնքի ավագանու նախնական համաձայնության որոշումը
5. Հանրային ծանուցման մասին հայտարարությունը՝ «Առավոտ» օրաթերթ առ 29.10.2024թ
6. 27.11.2024թ. տեղի ունեցած հանրային լսումների արձանագրությունները և մասնակիցների ցանկերը՝ ստորագրություններով
7. Պետական տուրքի անդորրագիրը
8. «Երկրաբան-Ուտիք» ՍՊԸ կողմից նախագծի տեղամասի երկրաբանական ուսումնասիրությունը՝ 2013թ.
9. «Երկրաբան-Ուտիք» ՍՊԸ կողմից նախագծի տեղամասի երկրաբանական ուսումնասիրությունը՝ 2019թ.
10. «Մել-Հով» ՍՊԸ կողմից նախագծի տեղամասի երկրաբանական ուսումնասիրությունը՝ 2021թ.
11. «Նորաշեն» ՆՏ ԱԿ կողմից նախագծի տեղամասի երկրաբանական ուսումնասիրությունը՝ 2023թ.